


ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ԵՐԹԱՅ ԲԱՐՈՎ...



Վաղը, երբ նոր տարիին սեմին վրայ ոտքերին զրած՝ նայուածքնին ետ զարձնեն պահ մը, ու հետեին հինին մեկնումին՝ ինչ պիտի ըլլայ մտածուած հայ յեղափոխականներուն, — անէ՛ծք, թէ օրհնէք պիտի ելլէ իրենց բերնէն, զայրոյթի ու դառնութեան խոժոժում, թէ երախտազիտութեան ու խանգաղատանցի յուզուած ժպիտ պիտի երեւայ իրենց դէմքին վրայ:

Մեզի քաղցր է մտածել թէ՛ շատ մը սուգերու եւ կօկիծներու ծանրութիւնը պահելով հանդերձ՝ յեղափոխական բանակէն պոհունակութեան ձայն մըն ալ պիտի բարձրանայ, տաք ու սրտաբուխ հրածեշտ մը պիտի տրուի հետագոյ 1901 տարիին.

— Երթայ բարս՛վ...

Ու աօրկա խորհրդապահ ու անկեղծ արտայայտութիւնը պիտի ըլլայ մեր ամենուս եղբայրական համախորհուրդ մտածումին: Ու ամենքս ալ պիտի զգանք բարերար սրտապնդումը՝ միտին տիրաբար քալուած ճամբուն:



Յաղթանակներու ու գերագոյն պատկուհներու փառաւոր տարի մը չեղաւ անշուշտ 1901ր: Բայց թուական մը, և անհուն նշանակութեամբ թուական մը, պիտի մնայ ան մեր յեղափոխական պատմութեան մէջ:

Հայ Յեղափոխութեան առաջին շրջանէն, ու զայն ահեղօրէն նուիրագործող Արիւնէն վերջ, լքումի անխուսափելի վիճակ մը գոյացաւ, որ տարիներ տեւեց և ուր յայտնուեցան կարգ մը յատկանշական երեւոյթներ, որոնք կարծել տուին շատերու — հաւատքով ու համոզումով աղքատներ, կամ ստրկութեան ի ծնէ ուխտուածներ — թէ յեղափոխական իտէալը ա՛լ անվերականգնելիօրէն ինկած, չարիքախուսած էր: Մէկ կողմէն վհատութիւնն ու թուլացումը յեղափոխական կարգերուն մէջ, միւս կողմէն անտարբերութեան, շուարուծի և օւրացման

փութկոտութիւնը մատ անձնատուութիւնը հայ ժողովուրդին՝ կազմեցին այդ տեռակ մը հակազգեցութեան շրջանը:

Աօրկա արգէն պէտք եղածէն աւելի քշեր էր: Պարտութեան ու դժնդակ ճակոքութիւններու մէջէն, անընկճելի հաւատքով մը, դէպի Նպատակը յամառող յեղափոխականներուն կը մնար վերջ մը տալ այս ամօթալի կացութեան, որուն անտահման երկարաձգումը տիեզերական զգուանքը պիտի հրաւիրէր մեր ազգային խայտառակ ինքնամահացումին վրայ:

Ու յեղափոխական կորովը իզուր չվատուեցաւ:



Ինչ բան իրաւունք կուտայ մեզի այս համարձակ ու հպարտ հաստատումն ընելու: — Ահա՛, թէ ինչ պիտի մոլտան, կսկիծստ դէմքով ու ցաւած փարով, բոլոր անոնք՝ որ իրենց ճղճիմ ու զարշահոտ գոյութիւններուն վտանգն ու սարսափը կը տեսնեն — եւ իրաւա՛մբ — Յեղափոխութեան ակներև հզօրացումին մէջ:

Անտարակոյտ աւելի պիտի մթազնին այս խաւարած մած հոգիները, բայց իրենց ազբխորով մօրմօքին վրայ արհամարհոտ գթութիւն մը իսկ չպիտի կրնար արգելել մեզ իրազոտքեմներ հաստատել:

Նախ պիտի ըսենք, թէ 1901ին յեղափոխական Գաղափարը յաղթեց: — Ու ասոր ջախջախիչ ապացոյցը կ'ընձեռեն մեզի անոնք իսկ, որոնք, երէկ, օանձարձակ լրբութեամբ մը, այդ նոյն գաղափարին դէմ կը զինուէին, կ'ոնային ու շեղու կը հանէին: Երէկ, Յեղափոխութեան արիւնոտ կուրծքին առջեւ պար բռնող, ու յեղափոխականի ծոած կոնակին քար նետող այդ շիւ ծնունդները, այսօր՝ չարաչար զգաստացած — թէև միշտ պահելով միևնոյն հեռը, միևնոյն թօյնը — յեղափոխական Գաղափարին կ'ապաւինին, անօր շուրջը կը օլքտկան, անով կ'երգուրնան եւ՝ իրենց մոլոր ու կոտորելիք ոտուրներուն առջեւ ճամբայ բանալու յոյսով՝ անօր համար «նքր օւղիներ» կը գծեն, «իմաստուն ու խոհեմ» կուտակցութիւններու օաղմբը վիժել կ'երագեն:

Այսօր — քրքովնետե. հասկցած եւ, քե այլապէս կարելի չէ յաջողիլ — Յեղափոխութեան յուսակտուր թշնամիները՝ ա՛լ միմիայն «յեղափոխականի» դիմակին տակ, Գաղափարին

զէմ ոգորելու վերջին տխուր հնարքին դիմել գտաւ պտտուած են:

1901ին յեղափոխական ճիգը մեծ զարկ մը առաւ — Վարանուձները, մեկուսացումները, վհատութիւնները սկսան դադրել յեղափոխական բանակին մէջ: Գաղափարը իրապէս ու խորապէս ամրացաւ մտքերուն վրայ: Գիտակցութիւնը, պարտաճանաչութիւնը, անձնուէր արամագրութիւնները արթնցան ու սաստկացան: Սրտերը խանդավառութեամբ կազդուրուեցան ու հաւատքը վերստին ուժգնօրէն հրահրեցաւ:

Երկրին մէջ մանաւանդ, յեղափոխական հինաւորաց կազմակերպութիւնները, որոնք կորովի ձեռքերու առաջնորդութեանը կը սպասէին ակնդէտ, նոր ու արգասանդ զարթնում մը ունեցան, և մաքառումի հողին վրայ մնացող ընկերներ ապացոյցը տուին, թէ ապագածի պէս ամուր ցեղի մը գաւազներն են ու գիտեն՝ ո՛չ միայն յաջողութեան ու դիւրութեան փայլուն օրերու մէջ Յեղափոխութեան թեւերուն տակ համախմբուել, այլ նաև, այլ մանաւանդ, գիտեն ձախօրդութեան, զժբազդութեան ու աղէտներուն առջեւ անվկանդ մնալ, զժուարութիւններու զէմ յամուրի, անկարելիին ճակատ բազխել, յեղափոխական գրօշը անվթար ու կանգուն բռնելու համար:

1901ին դիրքերը վերջնականապէս ճշդուեցան: — Անոնք որ ինքնապաշտպանութեան հանապազօրեայ պէտքով մը, տկամայ սպրդած էին յեղափոխական շարքերուն մէջ, մաքրուեցան, աւուրեցան:

Ու այդպէս, Յեղափոխական Գործին վաղանցուկ լքումը տեսակ մը գտնուի յանկեցաւ: Յեղափոխութիւնը նմանեցաւ այն հումկու ծառին, որուն վրայ փրթող փոթորիկը՝ անոր փտած ճիւղերը միայն կրցաւ վար թափել: Ծառը, իր բոլոր առողջ ու կենսունակ մասերովը, հաստատ ու կանգուն մնաց: Թերահաւատները, անգիտակիցները ու անոնց հետ, վատերն ու դասալիցները հեռացան գացին, բայց ատով երբէ՛ք բան մը չի պակօտեցաւ յեղափոխական բուն ու արգասանդ ուժէն: Ընդհակառակը, բոլոր մաքուր ու կորովի տարրերը մնացին, կուրծք տուին ամէն զժուարութեան, ու այսօր Յեղափոխութիւնը վերստին կ'ապրի ու կը գործէ, իր է՛ն հարուստութիւնը: Հօգօր ու ներդաշնակ խոյանքովը:



Անշուշտ 1901ին՝ մեր Հայրենիքը չի դադրեցաւ արիւննելէ, Հայ Տառապանքը չամոքուեցաւ, չլոց բնաւ և ողակ մը իօկ չինկաւ, չպահսեցաւ Հայուն վիզը ծող, փորոզ ստրկութեան շղթաներէն: Բայց յեղափոխական մաքառումը — այն գերագոյն ճիգը, սերկից կախուած է մեր ազգային ճակատագրին բարուցումը և որ միայն պիտի կրնայ փրկել Հայութեան պատին ու կեանքը՝

վերջնական անյարիր անկումէն ու հաւաքական անճողոպրելի անէացումէն — յեղափոխական մաքառումը, 1901ին, հօգօր ու խանգավառ թափով մը, այլ առանց փողի ու թմբուկի, խուլօրէն, յամառօրէն, այլ մանաւանդ գիտակցաբար վերոկսաւ:

Անշուշտ 1901ին՝ գաւերը, էութիւնները, վատութիւններն ու մատնութիւնները չդադրեցան յեղափոխական Գործին շուրջը ու նոյն իսկ ամէն առենէ աւելի պիղծ, ամէն առենէ աւելի ժողովին եղան թերևո՛ւ Բայց անոնք բնական, գրեթէ անխուսափելի էին: Մահու եւ կենաց ստիպողական, շախշախիչ խնդիր մըն էր, որ դուրս կը թափէր յանկարծ ամբողջ թարախը նեխած հոգիներուն, եւ օրհասական դաւարումները ա՛լ աստն ու ճար ու տրամագրութիւն չէին թողար իսպառութեան տիղմին մէջ թաւաղողներուն՝ տեսակ մը յուսահատ շնորհք, տեսակ մը շնական վայելչութիւն, կամ տեսակ մը ճգաւկտոր ու օրտաշարժ հպարտութիւն գնելու իրենց անկումին մէջ: Ու դիմակները՝ առանց վար առնուելու՝ գրեթէ ինքնիրենց ինկան ու գեռ պիտի իյնան հեռզհետէ, երեսան բերելով բովանդակ զժնէութիւնն ու սեւութիւնը ամօթով խարանուած քոտմեղի զէմքերու: Ու ա՛լ որքան թունաւոր ըլլան յարձակումները, օրքան մթին ու անխստովանելի՝ մեքենայութիւնները, ա՛յնքան ապացուցուած պիտի ըլլայ, որ նենգաւորներն ու դաւաճանները ճշմուած են չարաչար: Ու աւելցնենք — առանց շատ խշխշացնել ուզելու արդէն կրած ու գեռ ձենճերող սրտերը Յեղափոխութեան քայքայումէ երազողներուն — թէ ա՛լ չի կայ ոգորում, չի կայ դաւադրութիւն, չի կայ մեղսակցութիւն, որ կարենայ վայրկեան մը արգելք, կամ խոչընդոտ դառնալ այսուհետեւ յեղափոխական Գործին առջեւ:

Անշուշտ 1901ին՝ յեղափոխական ուժերու բաղձալի միութիւնը դեռ չիրականացաւ: Բայց անկեղծ ու կորովի ձիգեր եղան զէպի յեղափոխական եղբայրութիւնը, եւ ո՛վ գիտէ ի՞նչ շքեղ անակնկալներ կը վերապահէ Հայ ժողովուրդին 1902ը...:

Չէ՛, մենք զժգոհ ու յուսաբեկ սրտով չէ, որ պիտի ողջունենք նոր տարին, ու հեռացող 1901ին համար պիտի ըօնենք.

— Երթայ բարձր...:



ՀՈԳԵՀԱՆԳԻՍԸ

(ԾՆՈՒՆԴԻ ԳԻՇԵՐՈՒՄՆ ՅԱՃԼԻՍՈՒՅԻ)

Ծնունդի գիշերը՝ ամէն անոնց համար սրտնք սիրտ չեն ունենար խնդալու եւ ուրիշներու խնդուքէն ու խըրահանքէն կը փախչին վիրաւորուած Ծնունդի գիշերը՝ անոնց համար, սրտնք ընտանի երգիքի մը տակ, զուարթ ու ակնապարար սեղանի մը շուրջը՝ սիրելի եակներու հետ, արժուկ արժուկի՝ բոլորուելու բաղդը չունին, Ծնունդի գիշերը՝ զարեպներուն, սքեքուն, բանտուած ներուն ու տարագիրներուն համար, կոկիծոտ վերլուշումներու, կրծոյ, մորմուքոյ կարօտի ու անձկագին յաճախանքներու գիշերն է զերագանցօրէն:

Ու անոնց հետ, որոնք իրենց ետին կիսուեր օճախներ ու կիսամեռ կեանքներ ձգեցին, հեռացան ու Օտարութեան խորթ գիրկը ապաստանեցան, անոնց հետ, ու թերեւ անոնցմէ աւելի հաւատարմութեամբ, Ծնունդի գիշերը՝ իմ մտածումս կը դառնայ, կը սեւեռի զէպի հնաւոր Հայրենիքը, զոր ես շտեայ երբէք եւ սրուն պատկերը՝ հոգիս ու պաշտամունքիս խորունկէն երկար ու շերտեանդ սգումներով՝ ախքան աղնխորչօրէն աղւոր գտայ ու հաւտացի միշտ:

Այդպէս, մանկութեանէ ի վեր, զԱյն տեսայ: Անոր նուիրական հողին վրայ, ուր երբէք ստուըններ չկոխեցին, հոգեւին հետեւեցայ, Ծնունդի գիշերները, հեռաւոր եղբայրներուս ու ջոյրերուս, որոնք՝ նախշուն հալաներով տօնազգեստուած՝ բարեպաշտօրէն ու հեւ ի հեւ խաչակնքուելէն՝ զէպի եկեղեցիները կը շտապէին: Ու հայրենի կոչնակները, քաղցր ու սղորմուկ ու աւետաւոր արձագանքներով, զիտու մէջ կոտտացին, ամէն անգամ:

Բայց Ծնունդի գիշեր մը—օ՛ շատ հին բան չէ Ըսածս—ա՛յ չի կըցայ ապրիլ Հայրենիքիս օրտաշարժ ու խանդաղատող աեօիլը: Առջի պայծառ ու յանկուցիչ պատկերը արուեր, պատտուեր էր ուղեղիս մէջ, եւ օւրիշ մը անոր տեղը բռներ՝ օւրիշ մը, ահաւոր, մահաշունչ, եղբրական, որ անկից ի վեր, ամէն տարի կը յաճախէ զիս, Ծնունդի գիշերները:

* * *

Մտածումիս մէջ, ուր այսպատկերը այլամերժօրէն կը քակուի, կը ծաւալի՝ անսահման, ամայի տարածութեան մը վրայ կորուած՝ շիտթ խանութ մը կը թուի ինձի պպտիկ, ցածուկ տնակներու՝ որոնց ձիւնապատ երգիքները՝ հողէն հաղիւ քիչ մը վեր՝ հայրենի գիւղին սղորմ ու օգակիբ

երկույթը կուտան շիրիմներով ծածկուած մենաւոր զեւրեզմաննոցի մը: Անպին, բարձրկէկ տեղ մը, կը ցցուի գիւղին անշուք եկեղեցին:

Գիշերին մէջ, ձիւնը կ'իյնայ անընդհատ, պատան, քուած գիւղին վրայ:

Բարձր ձայները մարած, բոլոր հոգիները կտրած, բոլոր շունչերը բնուած բլրան կտրածեա, ախքան խօսք ու խորունկ է լուսութեան, որ կը սիրէ, կը ծանրանայ, կը յաներժանայ ձիւնի ձերտակ, որ անոնց համար անհոգի զոգուած խաւարին մէջ:

Եւ ահա յանկարծ կոչնակ մը կը սպար ստի, որ ու յառակ գանգիւններով, որոնք, իրարու ետեւէ, սեւեղական միջոցին մէջ կ'իյնան, կը խեղդուին, անկարող ազմկելու անոր համատարած, անզիմագրելի խաղաղութիւնը: Կիւ գիշերը անցիր է:

Ծերունի ֆահանան իջեր է արդէն իր խօսքէն, մամերն ու կանթիզները վառեր ու Մաշտոցին առջիւ անցիր՝ իր ուխտունամենի կոնակը անգամ մըն ալ կըցած տօնական օրերու վաղընջուց փիլոնի մը տակ:

Դուրսը, մամուն բակը, ուրիշ ծերունի մը, գիւղին հիւսուօրց Տիրացուն, կը շարունակէ զարնիլ կոչնակը, հաւատացեախներուն ուշանալէն քիչ մը զարմացած՝ իր հարուածները հեազհեաէ սասակացնելով:

Եկեղեցիին մէջ մարդ չի կայ:

Ծերունի ֆահանան, առեն մը լուռ աղօթիկէ ու կրկին ու կրկին խաչակնքուելէ վերջ, ետին կը դարձնէ իր ալեւոր զուխը, պղտոր աշուընները ամէն կեղմ կը պտտցնէ, ու տաճարին պարապէն վրդովուած՝ ինքնիրեն կը հարցնէ թէ մի գուցէ զեռ շատ կանուխ եղած ըլլայ: Դողղջուն ձեռքը ծոցին մէջ կը խսթէ, մաշած կափաբէջով, իրեն հետ ծերացած ժամացոյցը դուրս կը հանէ ու իր զիտուն պլպլացող կանթեղի մը լոյսին տակ ուշի ուշով կը նայի: Չէ, կանուխ չէ բնաւ: Ընդհակառակը, առենը անցնելու վրայ է: Ու ֆահանան զիտէ, որ իր ժամացոյցը՝ ամբողջ օրհներգութեան ու սրբագործումի երկար ու միօրինակ տարիներու ընթացքին՝ անգամ մը իսկ չէ խաբած զինքը:

Մեղք համարելով Ծնունդի գիշերուան ժամերգութիւնը տակաւին ձգձգել, ֆահանան զէպի խորանը կը դառնայ, ու կը սկսի, տկար ու բեկբեկ, այլ մաքուր ու սրտառուչ ձայնով մը, սաղմոսերգել:

—Տէր, երբ գըրբունս իմ քանաս...

Դուրսը, Տիրացուն՝ այլայլած, գայթակղած՝ հաւատացեախներու այս անլուր, աներևակայելի յապաղումէն, իր ծեր բազուկներուն բոլոր ճարովը, կը յաճախ կոչնակը հնչեցնել, յարածուն ուժգնութեամբ մը:

Գիւղը կը լռէ անսղօքելիօրէն, ու կոչնակին տրտմական, աղքատարկու, տօնահրաւեր գանգիւնները՝ անկարող արթնցնելու անոր թաղուած կեանքը՝ կը աբուտընին, կ'ընդելուզուին, կը մեռնին միջոցին անձայրա

ծիր խաղաղութեանը մէջ:

Ու ձիւնը կը տեղայ, կը տեղայ անընդհատ, պա-
տանքուած գիւղին վրայ:

Քահանան, միօթիքական յափշտակութեամբ մը,
իրականութեանն անջատուած, տարուած՝ կ'աղօթէ ու
կ'որհնեցէ շարունակ, միս մինակ, խորանին առջեւ, ջեր-
մեռանդորէն բազկատարած: Իր ձայնը, իր հէզ, ծերուկ
ձայնը, ցաւագին ու աղեխարշ կողկողումներով, գմբէթն
ի վեր կը բարձրանայ, պատէ պատ կը զարնուի ու սա-
լաքարերուն վրայ կ'իյնայ ճղակտոր, հոգեվարք թռչունի
մը պէտ թալթլելով պարապ սաճարին մէջ:

Ու ան վայրկեան մը չի դադրիր ու խուլ՝ կոչնակին,
որ հիմա վտանգի և հնհնուքի խելայեղ աղաղակներ կ'ար-
ձակէ, ինք իր ձայնէն գինովցած, թունդ ելած՝ կը շա-
րունակէ արարողութիւնը, ինչուան որ կարգը կուգայ
Ծնունդի գերագոյն շարականին:

— Խորհորդ մեծ և սքանչելի...

Հոտ, յանկարծ կանգ կ'առնէ, ու նորէն ետին կը
դառնայ: Բուռնօրէն հիասթափ, ծերունի Քահանան
սահմակած, քարացած կը մնայ միեւնոյն պարապին առ-
ջեւ, որ այս անգամ, աւելի ցորտ, ընկճող ու սարսուղու
կը թուի իրեն, ու ա՛լ ամէն վարանուծ, ամէն երկբա-
յութիւն, ամէն ակնկալութիւն կը խեղդէ իր մտքին մէջ:
Տարապայման անձկութիւն մը կը գալարէ, կը թօթուէ
իր շորքած, կծկտած մարմինը: Գլուխը այս ու այն կողմ
կը ճօճէ, ցնորական տատանումներով: Անճար ու ազա-
զուն թեւերը կ'երբերցնէ, տենդային, շղաճգական շար-
ժուճներով: Ու մագալաթակերպ թոմթոկած շրթներէն
դողահար բառեր կը թափթփին:

— Տէր, ողորմեա՛... Տէր, ողորմեա՛... Տէր, ողորմեա՛...

Քահանան օրհասական ճիգեր կ'ընէ ինքզինքնին բա-
ցատրելու համար տարօրինակ, շարագուշակ իրակա-
նութիւնը, բայց չի հասկնար, չըմբռնէր զայն ու կ'ընկ-
ճուի, կը խորտակուի նորէն անոր վիթխարի ու սար-
սափարկու խորհուրդին տակ, զոր չի կրնար թափանցել:
Ծնունդի գիշերով, հաւատացեալներու խուսն բազմութիւն
մը լեցուցած չըլլա՛յ գեռ եկեղեցին... մէ՛կ հոգի մը իօկ ե-
կած չըլլա՛յ ամբողջ գիւղէն... ասիկա անհնարին, ան-
յղանալի, անհաւատալի բան մըն է, զոր իր բովանդակ
երկարատե գոյութեան մէջ երազել անգամ չպիտի կա-
րողանար, չպիտի համարձակէր, և որուն առջեւ իր կայ-
ծականհար ծերութիւնը կը քստմեծի, կ'ապօտամբի, կը
բողոքէ յուսահատօրէն:

Քահանան ա՛լ չի կրնար համբերել, ա՛լ չի կրնար
հանդուրժել այդ անտոյգ ու տափնապիչ կացութեան:
Փիլոնը կը հանէ, կը նետէ ու՝ կիսկատար թողով ժա-
մէքութիւնը՝ դուրս կը փութայ ելլել եկեղեցիէն, իր կթօտ
ու անկայուն սրունքներուն վրայ զանդաշելէն:

Դուրսը, խաւարը փարատիլ սկսեց է, ու ձիւնը կ'իյ-
նայ շարունակ, հանգարտ ու անվախճան էջքով մը:

Քահանան հեւ ի հեւ Տիրացուին մօտ կը շտապէ,
որ՝ հաւատացեալներու գալուստին այդ անվերջ օպա-
տուէն զայրագնած, փոթորկած՝ յուսահատ մոլեգնու-
թեամբ մը, կոչնակը կը զարնէ, կարծես անոր հետ
ճաթելու, անոր տակ խորտակուելու, իյնալու գերագոյն
ուխտադրութեան մը մէջ յաժառեղով:

Բայց Քահանային ի տես՝ մէկէն կանգ կ'առնէ Տի-
րացուն:

Երկու ծերունիները իրարու երես կը նային, պակու-
ցումի և անձկութեան անպատու նայուածքով մը: Մի-
կնոյն տափնապը կ'ալիկոթէ իրենց մաշած, ազազուն
հօգին, միննօյն շուարուժը կը տանջէ իրենց լճացած,
անդամայոյծ մտածուժը: Իրարու յառած՝ իրարմէ կը
սպասեն, կ'ակնկալեն յայտարար ու անդորրիչ բառը:
Բայց ի գօր: Ոչինչ կը գտնեն զուրցելու: Միտօին
ծերացած այդ մենաւոր էակները ոչինչ կը յիշեն իրենց
դատարկ ու մըսպաղաղ կեանքին, որ կարենայ լու-
սաբանել զհրենց ջախջախող մթին առեղծուածը: Ու
կը լսեն ու կը նային իրարու, իրենց նայուածքներէն
կարծես տակաւ պարպուող, ազլական աչքերով:

Բայց ահա Քահանան կը շարժէ իր շորքած շըր-
թունքները:

— Եարունակէ՛ զարնել կոչնակը, ինչուան որ ես վե-
րագանամ, կ'ըսէ ան Տիրացուին:

Ու անզայրուծ տեղացող ձիւնին տակ կորաքամակ՝
Քահանան զուրս կ'ելլէ եկեղեցիին բակէն ու հապշտապ
գէպի գիւղը կ'ուղղէ իր անհաստատ ու երբերուն քայլերը:



Քահանան կանգ կ'առնէ ցածուկ խրճիթի մը սե-
մին վրայ: Դուր ծածկուած է ձիւնի թանձր խաւով մը:
Ծերունին անոր մէջ կը մխրճէ իր կամխացած ձեռքը,
զայն քիչ մը կը քերթէ, ու իր սառած մատուրները փայ-
տին վրայ կը սկսի զարնել, ճմլել:

Չայն ձուն չի գար ներսէն: Քահանան, պահ մը,
կը սպասէ: Յետոյ՝ օրէն ղռան կուրծքին կ'իջեցնէ, եղ-
կելիօրէն, իր կարկամած բունցքը:

— Բացէ՛ք, բացէ՛ք, ես եմ, Տէրտէրն է...

Պատասխան չի կայ: Ո՛չ մէկ շուկ, ո՛չ մէկ խլըր-
տուժ կը լուսի ներսէն:

Ծերունին կ'անհամբերի, կը օրտմտի, կը յամառի:
Իր անարիւն անդամները սկսեց բն թմրել անողոք
ցուրտէն: Ա՛լ չի կրնար գիմանալ: Վերջին բունն ճիգ
մը կ'ընէ: Դողողուն գատակները ձիւնի սառած խա-
ւին կը կոթնցնէ ու բոլոր սպառած ուժովը կը հրէ:

Խրճիթին դուր մէկէն կը բացուի, կ'ոնակի վրայ:
Քահանան ներս կը մանէ:

Հազիւ քանի մը քայլ, ու ահա՛ կանգ կ'առնէ զա-
հանգած՝ ահաւոր տեօարանի մը առջեւ:

Ամբողջ ընտանիք մըն է, որ օտաեր, փատ կտրեր է հօտ: Մարած օճախի մը շուրջը, պապը, մամին, հայր, մայր ու զաւակներ զիականցեր, իրարու վրայ զիզուեր, իրարու փաթթուեր են:

Քահանան՝ զողահար՝ կը մըռնչէ:

— Տէր, սղորմեա՛, Տէր, սղորմեա՛, Տէր, սղորմեա՛...:

Մեռելներու տեղէն չէ որ կը օտարափի՝ սերունդներ թաղած ձերունին: Բայց ատոնց բաց մնացած աչքերուն մէջ, զեռ շմեռած նայուածքներ կան, որ իրեն կը սեւեռին ու իր հոգին կը օտաեցնեն:

Քահանան զուրս կ'ելլէ ատկէ, արագ արագ խաչակընցուելով, ու զէպի յօտակայ խրճիթ մը կը շտապէ:

Դուրը կը զարնէ: Բացող չի կայ: Կը հրէ: Դուրը կը բացուի: Ներս կը մտնէ: Ու միւնոյն եղբրական տեսարանն է, որ կը պարզուի նորէն իր շմորած աչքերուն առջև:

— Տէր, սղորմեա՛, Տէր, սղորմեա՛, Տէր, սղորմեա՛,

կը պոսայ ան, կրկին կրկին խաչակնքուելով, օւ ատկից ալ զուրս կը փութայ ելլել, խելայիդ աճապարանցով:

Ու այդպէս, ատեն մը, զօնէ գուտ, խրճիթէ խրճիթ, կը քաշկուտուի ձերունի Քահանան, ամէն սեղ մարած օճախներ օւ փացած, անշնչացած կեանքեր հաստատելով:

Դիակներ... զիակներ... զիակներ...:

Յուրտէ օւ սովէ օտաեր, զիակնացերէ ամբողջ զիւղը: Երկու ձերունիները, Քահանան ու Տիրացուն միայն ողջ մնացեր են, վախճանական արարողութիւնը կատարելու համար կարծես իրենց հօտին թաղման: Բայց չէ՛, զայն թաղել իօկ շեն կրնար: Իրենց բազուկները շեն բաւեր, փօրելու համար ամբողջ զերեզմաննոցը բուրբ այլ զիակներուն: Հարկ կ'ո՛յ արգէն ատոր: Թաղուած շեն միթէ անոնք իրենց դամբանական երգիքներուն տակ: Գերեզմաննոց մը չէ՛ այլ եւս բովանդակ վիւղը:

Քահանան, պահ մը, կը կենայ անշարժ, իր ձրւնով անգամ մըն ալ ձերմկած սօրուցին մէջ անորոշ աղօթից մը կը մըթմթայ: Յետոյ ձեռքերը կը աարածէ զէպի խրճիթնորը, ամէն կողմ կը խաչակնքէ: Ու կը դաժնայ, իր ցաւազին քայլերը կ'ուղղէ եկեղեցի տանու զարվերին:

Իարձրէն, մեռած զիւղին իրայ, իր անկարող պաշտպանութեան սնայն ու հանգիստօր մէսթը կ'երկարէ տակաւին Եկեղեցին, որուն՝ այնքան դարերով՝ պաղատանքի օւ անձկութեան, մաղթանքի օւ ակնկալութեան օտրկական նայուածքներ դարձուցած, սեւեռած է վարէն Հայ Գիւղացին...:

Ու կոշնակը, որ զեռ կը հնչէ, յուսահատ զօլանջ մըն է այլ եւս, որ կը վայէ, աղէտագուճ թնդիւններով, ու Հայ Գիւղէն մահը կը գուժէ կարծես, խուլ, անկարեկիր, յաւիտենական միջոցին մէջ:

* * *

Քահանան կը հատնի շնչասփառ: Տիրացուն ընդատաշ կը փութայ, անհամբեր իմանալու գերագոյն, առը: Քահանան, հատկտեալ վանկերով, կը հաղորդէ անօր զարհուրելի բոթը: Ու երկու ձերունիները՝ գլխիկօր ու ընկճուած՝ Եկեղեցիէն ներս կը մտնեն:

Քահանան փիլոնը կը հագնի: Տիրացուն բուրվաոր ձեռք կ'առնէ:

Ու աղէխարչօրէն իրարու ձայնակցելով՝ Մուռնդի լուսազարդ խորանին առջև՝ Հոգեհանգիստը կ'ընեն հիմա մեռած Հայ Գիւղին...:

ՍՍՊՍՏԱԿՆԵՐԸ

ՄԻՆԱՍ ՕՂԼՈՒ

Թ.

ԴԻԱԿԱԳՈՒՏԸ

Մահաշուք լուսինն մը կը տիրէր ամէն կողմ: Ժամ մը առաջուան կախի աղմուկը զարբեր, ինկեր էր ու սոսկուժի հոփէ էր հիմա, որ իր մահերգը կը փշէր այդ ամայութեան մէջ: Հայ ու թիւրք զիւղացիներ գոգահօվիտին հզրեքը վագեր էին. եւ լարուած ուշադրութեամբ մը, անցուդարձերուն ելքին կը սպասէին: Գընդակներու օարսափը զանոնք գամեր էր իրենց եղած տեղերին: Ու ամենքն ալ իրենց հորստներուն ձայնին կարօս՝ անհամբեր կը տենջային որ անոնք իրենց օտրկներուն արինսփը ներկուած, վիհապանձ հպարտութեամբ մը, զուրո ցատքէին այդ անօրոշութեան մէջէն եւ յաշթական աւետիօր գոտային՝ իրենց վրայ ոքանչացող, զիրենք պաշտօց ամբոխին:

Զայն ձուն չէր հլլեր օակայն:

Իրիկունը կը մօտենար, եւ արեւը, Գուրչունչուի լեռնհրուն բարձունքէն, կտիւին վայրը կը շիտէր: Անօր մշուշի մը ճոլանքը՝ աշնուած բամբակի գէզերու նման՝ վարէն՝ Եէշիլ Ըրմագի տէլթայէն՝ Սեւ Ծովի զէպի ցամաք խուժող կծու հովէն հրմշտկուելով՝ Գափու Գաւախ լեռնի վեր կը գլորէին: Ամէն կողմ հանգարտութիւն: Հրացանաձգութեան յաջօրդական որոտներէն ահաբեկ վայրի թռչունները փախչեր, հեռացեր եւ անմատչելի ապառաժներու գլխին թառած՝ օմքեր, մնացեր էին:

Քունն սրտնեղութենէ մը գալարուելով, զիւղացիները՝ իրենց բարձունքէն վար կախուած՝ անհուն հետաքրքր-

բուժեան ճիգով մը, կը նկրակին խորհրդաւոր դարձած այդ գոգահովտին զաղանիքը թափանցել: Հրացանա- ձգութեան աղմուկին զաղորելն վերջ, ո՛չ մէկուն ալ, կէ դուրս ելլելը տեսնը կին: Կամ ամենքը մեռած ըլլաւ: Լուին եւ Լամ մահացու վերջեր ասած՝ յնկեր, կը հանդային: Իրենց սուկուժը արեւմտ աստիկ կը, որ անոնց ճգնաժամն անգամ խանգարել չգիտի համար ձակէին:

Այս անձկագին սպասուժի վիճակին մէջ սակայն կին մը կը տեսնուէր, որ՝ ամայութեան շարաշուք ոգիի մը պէտ՝ մէկ ծառէն մէկալը, մէկ ցանկապատէն միւսը կը վազէր ու ծախով, ծոռակելով, շատ անգամ չորեք- թաթ կը քաշէր: Գիւղացիներէն ոչ ոք զայն նշմարել էր, եւ վերջալոյսին հետ, անտառին թանձր սառուերին մեջ բոլորովին անտեսանելի եղեր էր ան:

Բաւական երկար ատեն, մարագին շուրջը սլքատաց ան: Քանի մը անգամ, ծոնցաւ ու սկսաւ, շան պէտ, գետինը հատուրտալ: Բան մը կը փնտռեր եւ իր այդ հե- տախուզութեան մէջ, կուրծքը կ'ուռէր, անձկութեան հեցով մը, ու կարծես շնչառութիւնը զայն պիտի խեղդեր: Դուրսը կատարած իր փնտառուքէն զգա՛հ դէպի մարագին դուռը քալլ առաւ: Դեռ սեմէն ներս չկոխած, պահ մը կանգ առաւ ու մտածեց: Վարա- նուժի նշաններ յայտնուեցան իր դէմքին վրայ, ու ծուն- կերը դողացին, մինչ լեռնագաւառի կժու ու ցորտ հովը անոր բոլորտիքը կը սուլէր ու քղացքին ու մա- գերուն հետ կը խաղար: Ճակտին վրայ ցրուած անկանոն խոպոպները մէկդի բրաւ ան ու հոն թորիչ սկոռզ պաղ քրտինքը սրբեց: Ուշի ուշով չորս կողմը նայեցաւ: Մարդ չի կար, ո՛չ ալ մարդու հետքի ձայն կը լսուէր: Հրեց մարագին գուռը, որ իր փայտեայ ծխնիններուն վրայ ճոնչելով քացուեցաւ: Վառուղի բանտարկուած ծուխը խուժեց ու անոր խեղդող հստին մէջէն կինը՝ իր գունչը վեր ցցած՝ սկսաւ ուրիշ հոտ փնտռել, ու խելայեղորէն հոտուրտաց:

— Հայու արեան հոտ չի կայ, քաջերը թեւաւորեր, թոեր, հեռացեր են, ըսաւ ան ինքնիրեն, և ուրախու- թիւնը անոր մթազնած դէմքին վրայ ճառագայթեց, սիրտը, այս անգամ հպարտութեամբ սկսաւ ուռիլ ո՛չ չկրնալով զսպել իր ներքին ամեհի երանութիւնը, փոր- ձուեցաւ երգել, իր կանացի ա՛ռու ձայնովը, հայ կարիճ- ներու վրայ յորինուած զիւցագիներգութեան մը վերջին տունները:

Մարագին մէջ երկար չի մնաց: Ստուգելէ վերջ, թէ ո՛չ մեռած, ո՛չ ալ վերաւոր հայ կար հոն, պատուհանին մօտեցաւ: Գուրս նետուիլ կը սպարաօտուէր, երբ յան- կարծ շարմանքի ճիշ մը արձակից: Ճիշդ իր դէմը, մէկ կողմէն պատին ու կիսով շափ ալ շոր ձախերու դէ- գին կոթնած՝ այլանդակ հսկայ մը կանգուն կը կենար: Ո՛վ էր ան, ինչո՞ւ մինչեւ հիմա դեռ հոն էր մնացեր,

երբ հրացանները վաղաց յոռած էին եւ հայ ու թիւրք մարտիկներէն ոչ ոք կ'երևէր կոխի գաշան վրայ: Թիշ մը համարձակութիւն առաւ, ու քիչտի պատշաճմին մօտեալով՝ շունչը բռնած՝ սկսաւ պիտել: Ոտեն մը մնաց այդ սեւեռուն գրուծեան մէջ: Կր ծառը տար- ծում մը, խլրտում իր սլմարել այլ տարօրինակ մար- գուն վրայ, որ՝ կարծես սաքի ինկած՝ կետաքի տան- քափոքը նշան մը իսկ ցոյց չ'ը խոտը: Սահմուտ, ապշած՝ ինքզինքը երուզացիարութեան մը խաղաղեք կասկածելով, զայն գերմարդկային երեւոյթի մը վն- ռագրեց եւ ուժգնորէն աչքերը յփեց: Բայց մարդը ու- թէն ոն կը մնար, իր դիմացը, միշտ միննայն պիւրքին մէջ արձանացած: Կինը ատեն մըն ալ մարտնելէ ետք, կրծաց կամաց համարձակութիւն առաւ, ու սուխ իր դէմքին կէսը, յետոյ քիչ մըն ալ ու վերջապէս ամբողջ զլուխը գուրս հանեց պատուհանէն ու բռնն հետաքրք- րութեամբ սկսաւ նայիլ:

— Արդեօք չոր փայտի կո՞նն է, կը մտածէր ան ինքնիրեն: Արդեօք ի՞ր նայաւածը կը խարէ՛ր զինքը: Բայց, ամէն պարագայի մէջ, մարդ մըն էր իր դիմացի- նը, ուրիշ բան չէր կրնար ըլլալ: Ու սուրէն մտասանչու- թեան մէջ ինկաւ:

— Գնդակահար հայ կարիճի մը գիտիլը չ'ըլլա՛յ, խոր- հեցաւ ան անձկագին, ու այդ մտածուժը թօթուեց իր ամբողջ մարմինը: Չէր կրնար այնչա այս անորո- շութեան հանդուրժել: Հայ առպատակ ըլլաւ, թէ՛ թիւրք հրոսակ՝ պէտք էր որ ոտուգէր: Բայր ուժը հա- ւաքեց, ու անվախ ու տիրակա՛ն օտարնով մը, ինքզինքը պատուհանէն գուրս նետեց, ու պահ մը վերջը մարդուն առջեւ անկուեցաւ:

Ստուած պիտի մըն էր:

Յուսախաբութիւնը մեծ եղաւ: Չայն առողջ գտնել երագեր էր ու անոր հետ շափաւելու թեւթ գողափտրն էր անցեր մտքէն: Ուշի ուշով զայն գննեց: Ոտոր երեսը դէպի մարդը վերջալոյսը դարձուց, անգամ մըն ալ նա- յեցաւ, ու պիւահարի աղաչա՛կ մը փրցուց: Մտնօթ պէմը մըն էր ան: Ո՛ր աեղ տեսած էր զայն: Ճիգեր կ'ընէր յիշելու համար, բայց, այլ տազնապի ու մտա- տանչութեան պահուն, իր յիշողութիւնը տարազներ էր բոլորովին: Երկար ու բռնն մտախուզութիւններէ յետոյ գտաւ սակայն վերջապէս:

— Լողմանն է, Լողմանն է, պոռաց խելայեղորէն, ու անտառի վհուկը, զիւղահան պարի մը խուլկան ուր- բութեանովը, սկսաւ գանալ ու գանալ զիակին շուրջը:

Բայց մէկէն սոսկալի զաղափար մը ունեցաւ: Ի՞ն- ակը պառկեցուց ու սկսաւ վերքը փնտռել: Չեղք Լող- մանի ծոցը խոթեց ու խնձղանքով մը գուրս քաշելով, շրթներուն տարաւ ու կատաղի ախորձակով մը զայն լզեց: Մինչեւ իր դատաւը աւագակին լճացած արեան գոնդողին մէջ մխրճեր էր:

—Ո՛ր կրնայ ըլլալ այս մարդուն զէնքը, հարցոց ապա, կարծես միշտ մէկը ունեցած ըլլար իր զէմը:

Բայց զէնք չի կար: Ամէն կողմ փնտոց, մացառուտին խառնածան տակ սոգոսկեցաւ, առուակին մէջ նայեցաւ: Չէնք չի կար, ո՛չ ալ փամփուշտ ու փամփուշտանոց:

—Ապո՛ւշ, աւազակ, զոսաց ան, իր բռունցքը անոր քիթին շարժելով: Յետոյ սաքի ելաւ, զիտակին վայրագ աքաղիներ տուաւ ու զէպի աթուակը գորեց զայն: Սիրտը քիչ մը պաղշկեցաւ, եւ զգալով որ ժամանակը կ'անցնէր ու մութը կոխելու վրայ էր, մարագին եզերքը շրջան մը ըրաւ և իր քայլերը անոր զրան հանդիպակաց կրնձ, նիին ուղղեց:

—Հատ մըն ալ, շան սատակ մըն ալ, պոսաց, ձեռքերը իրարու միացնելով, եւ ուրախութենէն ծոնկուըններուն վրայ զանդաշեց: Հայ ըլլալուն վստահ էր:

Երեսի վրայ ինկած զիտակ մըն էր: Զգնածամին դառնութենէն՝ երկու ձեռքերնորով, կնձնի հովանիին տակ բուռած խճոններուն կառչեր էր: Կինը յօտեցաւ ու լուսնոտի պէս աչքերը բացած՝ պահ մը անոր զէմքը դիտեց: Պզտիկ դող մը, վրդովմունք մը իսկ չէր զգար: Գիտակին զլխուն վրայ ծառայած՝ յափշտակուեալ, կեցեր էր, ու խելքը հայ քաջերուն էր թռեր նորէն: Արդեօք զիտակին անոնք իրենց կոխին ելքը, լուր ունէին իրենց յաղթանակէն:

—Սա շունն ալ ճանչնանք, բօաւ կինը, ու ծոնկով գետին դիտակին զէմքը զէպի երկինքը դարձուց:

—Սատակիդ աչքերը թէեւ արժանի չեն Աստուծոյ լոյսին, բայց՝ ինչ որ է՝ երեսոյ պիտի տեսնեմ, մըրթ մըրթաց ան ինքնիրեն, ու զիտակը հազիւ դարձուցած՝ սկսաւ մոլեգնաբար խնդալ:

—Հասանն է... Հասանն է... ան սրիկան, ան շունը... Ինձի ալ ժամանակին խօսք նետեց, ո՛նեքնոր... զէհ, արթնցի՛ր, աւազակ, արթնցի՛ր, ե՛լ, հո՛ս եմ, քովդ եմ... քու զիտակը կը ծագրեմ...

Իր խելագար պոռչտուքէն ինքն ալ ուշաբերելով՝ կինը մէկէն լոնց, ինքզինքը ժողվեց, ու այլանդակ միտք մը յղացաւ: Ուզոց աւազակի զգեստները հագնելու ու այդպէս իր սիրական ասպատակներուն երեւալ:

Սկսաւ դիտակը մերկացնել: Կիւշիկ Հասանի մարմինը զեռ չէր պաղած: Իր ցրնիս ցրնիս եղած ճակտին խօշոր բացուածքէն ուղեղը դուրս թափեր՝ ու արիւնոտ հողին հետ խառնուեալ, շաղուըուեր էր: Չգուշութեամբ մը զիտակին վրայէն զպղան ու բաճկոնակը հանեց եւ հագաւ, պաշլըղը իր զլխուն կապեց, առանց ուշադրութիւն ընելու որ կիսովին արիւնով ներկուած էր ան, քարթուշամանները խաշածեւ իր կանացի կուրծքին վրայ անցուց, և կիսամերկ զիտակին սաքէն քաշիւտելով՝ մօտը գտնուող փոսի մը մէջ շարդեց: Այդ՝ արարողութիւնը լմցնելէ վերջ, տարօրինակ կեցուածքով մը արձանաւ, ցած՝ Հասանի արեան զէպի վար՝ փոքրիկ աղբիւրը

բացած ախօրը դիտեց վայրկեան մը: Կարմիր հեղու կին վերջին կաթիլները աղբիւրի ափին մէջ զեռ կը քամուէին: Կատարի թափով մը, ցանկապատէն վար նետուեցաւ, ծոնկի եկաւ ու՝ արիւնով գինոքալու վայրագ տենջանքով մը՝ աղբիւրին կարծած ջուրը սկսաւ լակել, լափել: Չէ՛ մի որ իր կարիճները թափեր էին այդ արիւնը...:

Պղէկ մը յագնալէ հոք, ինքզինքին եկաւ: Վեր թաւա և կարմրացու աչքերով, իր շուրջը դիտեց: Առպատակի այդ զգեստին մէջ հպարտ կը զգար ինքզինքը, կ'ուզէր սակայն հրացան մըն ալ ունենալ: Դէպի առուակը շտկուեցաւ, եւ հազիւ թէ քանի մը քալլ առած էր, երբ գետերուն մէջ հրացանի մը երևոյթը նշմարել կարծեց: Ոստիւնով մը վրան ինկաւ, ու կիւշիկ Հասանի մարթինը ձեռքին մէջ վեր բարձրացնելով՝ սկսաւ զայն անյագ շրթներով համբուրել: Հասան, իր ճգնաժամին մէջ, զայն զէպի կապետը նետեր էր:

Հիմա ամէն բան կատարեալ էր: Պէտք էր ասպատակները գտնել: Բայց ո՛ր էին, ո՛ր կողմ քաշուեր էին անոնք: Չէին կրնար հեռացած ըլլալ, որովհետեւ զիտեր թէ իրենց կոխին ելքը ստուգելու համար այդ մօտերը, տեղ մը պահուրտած ըլլալու էին անոնք: Կին հրօսակը զէպի արեւելք ուղղեց քայլերը: Անտառը կը խտանար հոս, որ ցանցածեւ թուփերու տակ պահուած էր Մէթալիկը: Վերջին անգամ մըն ալ պայն տեսնել ուզեց, բայց հազիւ քանի մը ծառեր անցեր էր՝ յանկարծ՝ անորոշ խօսակցութեան մը ձայներ ափանջին պպան: Իրեսի վրայ գետին փոսեցաւ և մացաններուն մէջ ծածկուելով՝ ափանջ գրաւ հասնող ձայներուն ուղղութեանը: Իր մօտն էին, քանի մը տասնեակ քալլ անդին: Առանց աղմուկ հանելու, փորին վրայ յառաջ սողաց, ու կամաց կամաց խօսակցութեան բառերը որոշ կերպով իր ափանջին սկսան զարնել:

Անոնք էին կառկած չի կար: Մինասի, Կապետի, Յովհաննիսի անունները փոխն ի փոխ կը կրկնուէին: Ինքզինքը ճանցնել ուզեց, բայց իր այդ գիրքին մէջ յանկարծական կերպով երեւալը կրնար վտանգաւոր ըլլալ իրեն: Ուստի խորհեցաւ նշանացի խօսիլ, և քանի մը անգամ, անձեղի ձայնը կեղծելով, անոնց ուշադրութիւնը իր վրայ հրաւիրեց: Իրեն պատասխանեցին նոյն եզանակով: Կինը կրկին եւ կրկին ձայնեց, առանց տնդէն շարժելու: Ասպատակները, որոնք այդ լեզուին վարժ էին, զգացին թէ տարօրինակ պարագայի մը հանդէպ կը գրտնուէին, ու իրենցմէ Մինասն ու Կապետը զէպի ձայնին ուղղութիւնը յառաջացան:

Իրմէ քանի մը քալլ միայն հեռու էին անոնք, երբ կինը տեղէն վեր ցատեց, հրացանը ձեռքին: Կապետ ու Մինաս ետ ետ ընկրկեցան ու իւրաքանչիւրը իր հրացանին գիմեց: Կանացի անառակ քահքահ մը գանոնք մէկէն կեցուց ու երկու կտորիճները, հրացանը ձեռուընուն, արձանացած մնացին:

— Լուսեա՛, բացագանչեց Մինասը, քանի մը քայլ անոր ժտենալով:

— Ի՛նչ Լուսեա, մըմնջեց կապետը, կ'երագծ...

Կինը սակայն՝ իր խաղին յաշուութենէն խելքը թըռցուցած՝ խնդալէն կը դալկանար:

— Ուսկի՞ք ձեռք ձգեցիր այդ զգեստները, հարցուց Մինաս, որտի անհուն յուզումով մը, ձեռքը անոր ուտին դրած:

— Կիչիկ Հասանինն են, անոր պաշլըղը, անոր հրացանը, չէ՞ք ճանչնար...

Կապետը, վրդովուած, ինքն այ ժտեցաւ Լուսեային:

— Ան խոշոր կնձին կը յիշէ՞ք, շարունակեց Լուսեան, ձիդ մտրակին դասն դիմացինը, անոր արմատին տակ սաակեր, ինկեր էր: Գնդակը ճակտէն էր անցեր, զգեստը հանած ատենս, շտնը լէշը դեռ չէր պաղեր...

Հիմա հասկցաւ կապետ իր ստիսին ո՞վ բլալը, ու իր սիրտը հպարտութեամբ ուռնցաւ:

— Շտնը արիւնէն այ խմեցի՛, յարեց Լուսեան, օ՛խ, ի՛նչ անուշ էր, սիրաս պաղչկեցաւ... Ժամանակին, պինով սրիկան խօսք նետեց ինծի, ան ատեն հրեսը ճանկըստեղ միայն յաշուեցայ. իսկ այսօր արի՛ւնը խմեցի... օ՛խ, ի՛նչ անուշ էր անուշ...

Եւ Լուսեան սկսաւ իր դիւթեքը օրունքներուն վրայ դառնալ, անանկան հագուստին մէջ, անհանդարտ մտքով մինը, խոփիչ շնորհքով մը, անընդհատ գալարելով ու շարածձի ծիծաղով մը, ակտաները ցցած:

Կապետ ու Մինաս փոխքերան մնացիւր էին: Հայ կին ու արիւն խմել... և սակայն Լուսեային վրայ վատահ էին, այդ յանդուգն վհուկը ամէն բանի կարող էր:

— Ինծի չէ՞ք ընդունիր ձեզի ընկեր, կարեց Լուսեան անոնց լուծիւնը, ո՛չ ձեր զէնքին կարօտ են, ո՛չ ալ զգեստին, ձեզի չափ կրնամ քայլել, պէտք եղած ատեն կը վազեմ ալ... Ինծի քիչ մը թիւրք զարնել սորվեցուցէ՞ք միայն...

Երկու կտրիճները զմայլած, վրդովուած՝ Լուսեային կը նայէին, հրավառ նայուածքներով:

— Հա՛, մոռցայ ըսելու, ատետեց Լուսեան, Լոզմանին ալ արիւնէն լզեցի... անպիտանը, ատանց զէնքի, մարազին պատուհանին տակ չորցեր, մնացեր էր...

— Լոզմանը, գոչեցին երկու հերոսները, ու երկուքն ալ, վայրկեան մը, իրենց առջեւ կանգնող կնոջ գոյութեանը կասկածեցան: Լուսեան հասկցաւ անոնց միտքը, և զանոնք փոխ ի փոխ հրմշակելէն, շարունակեց:

— Ի՛նչ կը մտտաք, եթէ ըսածիս չէք հաւատար, ձեզ հիմա՛ այդ երկու դիակներուն քով տանիմ...

Մինաս ու կապետ, իրենց մտամոլորութենէն ոթմափած՝ Լուսեան ալ միտսին առնելով, զէպի միտ ընկերները յառաջացան:

— Այս կողմէն, այս կողմէն, հրամայեց Լուսեան, օրուն մեքենարար հնագանդիլ օտիպուեցան կտրիճները: Անկարելի էր ալ իրենց զիմադրել այդ կնոջ տիրական

հրապոյրին, ու՛ եթէ ուզեր ան՝ մինչեւ վերջը իր ետեկն պիտի երթային:

Քանի մը պզտիկ ձարերէ անցան և անտառին խտութեան մէջ, մացառուարի մը քով կանգ առին: Լուսեան կոշտ զէպի մը մտեցաւ, ու խոտերն ու հին յաթի կտորները մէկտէր ընելով՝ մարգու մը մարմինը երեսն բերաւ անոնց տակէն:

— Մեթայիկ, ճշացին քաջերը, ու կրակելու կը պատրաստուէին, երբ Լուսեան ինքզինքը անոր պաղած մարմնայն վրայ նետեց և պոռաց:

— Կեցէ՛ք, Ի՛նչ կ'ընէք... յարգեցէ՛ք այս մարդը, որ ձեր կեանքը փրկեց: Եթէ ան չըլլար, զո՞ք յանկարծակիք պիտի պայթէ և ո՛վ գիտէ ինչ պիտի ըլլար կոխիւնելը: Ու Լուսեան մտորամածօրէն պատուեց Մեթայիկի կատարած գերը:

Կնոջ պատմութիւնը օտպատակներուն սիրտը կակըղցուց, անոնք ահօակ մը խանդապատանքով մտեցան երեսնց հին թշնամիին կիսամեծ մարմնայն: Չեղբորնին անոր օրտին վրայ գրին: Կը բարտխէր: Մինաս սուչեց, ու հազիւ քանի մը վայրկեան անցած, պահակներէն մէկը հասաւ իրենց քով:

— Շուտով, մօտի տուններէն մէկը տար առ, հրամայեց Մինաս, Մեթայիկի մարմինը ցոյց տալով, թո՛ղ վարձակետը կանչեն ու պէտք եղած խնամքը տանին: Վարձակետին կ'ըսես իմ կողմս, սր խուժը ազատուին է, առ կը բաւ:

Պահակը շալկեց Մեթայիկի մարմինը ու հեռացաւ: — Մեկնելու ենք, ըսաւ Մինաս, երբ բոլոր ասպատակները միտտեղ հաւաքուած՝ Լուսեան կը դիտէին ապշած ու հիացիկ աչքերով:

— Մեկնելու ենք, կրկնեց Մինաս, որովհետեւ՝ զէթ քանի մը շարժուան համար՝ մեր դիրքը, այս լեռներուն մէջ, անկարելի պիտի դառնայ: Ու հաւաքուելու, պատրաստուելու հրամանը տուաւ:

— Ձի՛ս ալ տարէք ձեզի հետ, զի՛ս ալ, աղերոսեց Լուսեան, խելայեղ շեշտով մը, ու տամուկ աղուոր աշուրներով, զի՛ս ալ տարէք, ա՛լ ես ձեր անբաժան ընկերը պիտի ըլլամ... զի՛ս ալ տարէք...

Մինաս, կապետ, Յովհաննէն շատ աշխատեցան զայն համոզելու, որ ետ կենայ իր յանդուգն ըղձանքէն: Բայց անկարելի եղաւ: Խուժքին հաւանութիւնը ուզեցին առնել: Հայ ասպատակները, ամենքն ալ, խանդավառութեամբ ընդունեցին այդ ամենի աղջկան ընկերակցութիւնը:

Լուսեան ուրախութենէն խենդեցած՝ կը պարէր, կը պարէր...

Պահ մը վերջը, Մեթայիկը տանող պահակն ալ եկաւ, ու առջերկուան մութին մէջէն, ասպատակները թէքֆուրի ճամբան ձեռք առին, Լատիկի վրայով՝ Տափչան Տաղի երթալու համար:

(Շարունակելի)

ԹՐԲԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

(Շար. Ասխորդ քիսիկ եւ վերջ)

Պ. Պէտար՝ քարափներու վերադնման մասին, Պ. Քոնսթանի յաջորդական նպատատոր ու աննպաստ տըրամադրութիւնները ու Սուլթանի դիմումներուն ու խոստումներուն վրայ՝ վերջնական հաւանութիւնը պարզելէ վերջ, կը բացատրէ, թէ ի՞նչպէս Ֆրանսական Ընկերութիւնը, որ նախապէս վճռած ըլլալ կը թուէր չծախել ու 69,000,000 ֆրանք կ'ուզէր, քիչ վերջ, (1901 մ. յիս) կը կախուղնայ, ու կարելի կ'ըլլայ վիճարանի 43,000,000 ֆրանքի վրայ: Պ. Քոնսթան որ կը շարունակէր իր հաշտարար ու դիրացուցիչ ծառայութիւնները, կը ստիպուի վերատին իր ազգակիցներուն պաշտպանութիւնը ձեռք առնել, Պալատի մարդոց զէմ, որոնք շուտ մը գործը լինցնելու եւ Ընկերութիւնը վերջնական զոհուցութիւններուն ստիպելու համար, ամէն կերպով անոր իրաւունքներուն գործադրումը կը խափանեն: Դեռսպանը կը մեղադրէ: Կը սպանայ: Ապտիւլ Համիտ անմիջապէս խօսք կուտայ որ 41,000,000 ֆրանքի վրայ պիտի բանակցին (1901 Յունիս):

Այն ատեն կը միջամտէ առաքինի խղճմտանք մը, որ բոլոր այս գործին մէջ քիչ մը շատ զանց առնուած էր:

Պ. Պէտար կը բացատրէ հոս թէ ի՞նչպէս Դուրը որ նախապէս հակառակ էր Պալատի փափաքներուն և նախարարները, որ ոչ մէկ գնով կ'ուզէին քարափներու վերադնումը, մէկը միտին ետեկն, աւելի օգտակար մտածումներու հասան: Եկիւ-Իւլ-Իսլամը միայն՝ այդ կարգադրութեան մէջ մտաբերած՝ նեղացաւ այդ յարգանքի պակասէն ու սպաննաց շղթայագործել իր կրօնական մեծ վիշապը: Քանի որ Հաւատացեալներու Առաջնորդը իր աստուածն ու ժողովուրդը կը մատնէր, կեանքներու ձեռքը կուտար հաւատարիմ մահմետականներու հէզ վատտակը, քանի որ, իր գարշելի կեանքը պահպանելու և անհաւատ շուններու զօրավիգը ծախու առնելու համար, Ապտիւլ Համիտ 41,000,000 կ'ուզէր կորցել հանրային Գանձէն, մինչդեռ այդ քարափները 20,000,000 իսկ չէին արժեք՝ Եկիւ-Իւլ-Իսլամ, Մէհմետ-Ճէմալ-Էտտին էֆէնտին պիտի ելլար լուսաւորել մահմետական հանրային կարծիքը և Մարգարէին ժողովուրդը պիտի գատէր... Այդ վարկեանէն, ա՛յ «բարեկամը» կրնայ մեղադրել ու դեռսպանը սպանալ: Ֆրանսական միջամտութեան մը հեռուոր վտանգին ու կրօնական շարժումի մը մտալուտ տագնապին միջեւ կը հասկցուի որ Ապտիւլ Համիտի ընտրութիւնը վա-

րանած չըլլայ: Իւ եթէ, դեռսպանին մեկնումէն ու Ֆրանսայի հետ յարաբերութիւններու խզումէն վերջ, աչքեռնարիչը երկարաձգուած ըլլար, պիտի հասկցուէր նորէն Սուլթանին յամառութիւնը, մինչեւ այն օրը, որ՝ Ֆրանսայի սպանալիքները կատարուած՝ պիտի չէզոքացուցած ըլլային Եկիւ-Իւլ-Իսլամին պղատոնական շանքաժը: Բայց կրօնական վիշապին սարսափը, որ առաջ գերակշիռ եղաւ, երկու ամիս միայն տեւեց, յունիս և օգոստոս 1901: Եկիւ-Իւլ-Իսլամին շուրջը, հակաֆրանսական կուսակցութիւնը խմբուեցաւ, Թահսին-Պէյ Պալատին մէջ անոր բերանը եղաւ: Քարափներու Ընկերութեան զէմ խափանումի (obstruction) քաղաքականութիւնը վերսկտաւ: Ֆրանսական միւս գործերը նոյն ընդունելութիւնը կը գտնէին: Խնդիրը՝ Լոսանոս եւ Թիւրքիոյ առնելիքներուն, կամ Ատա-Բազարի ճահիճներուն, մեր թղթատարական պայուսակներուն, կամ մեր դպրոցներուն, քաղղէացի պատրիարքին, կամ Պէյրութի մեր բժշկական համալսարանին՝ ինչիւր վրայ ըլլար՝ միշտ միևնոյն ժպիտնէր, միևնոյն յարգանքի հաւատումները՝ ճանչցուած իրաւունքներուն համար, անմիջական արգարագործութեան միևնոյն խոստումներն էին, յետոյ միևնոյն զլացումները՝ իրական միջոցներու վայելչօրէն ծաղրուած՝ դեռսպանը ժպտուն հաստատամտութիւն մը կը պահէր, ազդարարելով որ ժպիտները կրնային միշտ շտեկել: Կը յիշեցնէր թէ այս վերադնումի խնդրին մէջ՝ վեհապետին բացայայտ ու կրկնակի խնդրանքներուն վրայ միայն գործած էր ինքը, թէ իր անձնական համոզումը եւ իր կառավարութեան պատշաճութիւնները այդ լուծումին չէին ի գար, եւ այլ ևս մէկ բան կը պահանջէր, բոլոր փոխանակուած խօսքերուն շնչումը և Ընկերութեան իր կանոնական իրաւունքներուն մէջ վերահաստատումը: Այս ինքնավստահ թուղթ խաղացողի անտարբեր հանդարտութիւնը, Պալատին մէջ, ակնածական զիջումի, գրեթէ հաւանութեան տեղ առնուեցաւ՝ Սուլթանի տկարութիւններուն... Յանկարծ «բարեկամին» ժպիտը կ'անյայտանայ: Դեռսպանը ութ օր միջոց կուտայ վճռական պատասխանի մը համար՝ Ֆրանսական բոլոր պահանջումներուն: Ութը օրը անցնելէ վերջ, շարաթ մըն ալ կ'ուշացնէ: Յետոյ խօսքը կը բանէ եւ, սահմանազրուիք անցնելով, ամէն յարաբերութիւն կը կտրէ տաճիկ վեհապետին ու կառավարութեան հետ... Այն ատեն ամէն բան կը փոխուի. երկու ժամուան մէջ Քարափներու խնդիրը կը կարգադրուի:

Դեռսպանը դեռ Սթամպուլի կայաբանն է, եւ արդէն Պալատին մէջ հարկաւոր միջոցները ձեռք առնուած են: Կրօնական մեծ վիշապը բերանակապ եղած է դիրաւ: Կը դարմանուի մոռացումը, օրուն զոհ եղած էր Եկիւ-Իւլ-Իսլամը. ա՛յ ան պիտի լռէ այնուհետեւ: 27 օգոստոսի իրիկունը, Քարափներու տնօրէնը Սուլթանին մօտ կը կանչուի: Նոր, բայց խիտ շահաւոր պայմաններ կ'ա-

ուշարկուին անոր: Սեպտեմբեր 1ին համաձայնութիւնը կը ստորագրուի, 1. Սուլթանը կը նորոգէ իր վերագնուած խոստումները 41,000,000 ֆրանքի համար, 2. կայսերական զանձուն վիճակը նկատի առնուելով՝ գործառնութիւնը տարուան մը յետաձգուած է, 3. մինչև այն ատեն, Րնկերութեան իրաւունքներուն և մենաշնորհներուն դէմ մէկ խոչընդոտ վերցուած պիտի ըլլայ, իր աւուրցեբը՝ զուտ հասոյթներու 50 առ 100ի պիտի վերածուին:



Այսպէս, սեպտեմբեր 1էն իսկ, քարափնեբու խընդիրը կարգադրուած էր. վերջնական կարգադրութեան մէջ ա՛յ անոր մասին խնդիր չպիտի ըլլայ անգամ: Սեպտեմբեր 1էն իսկ, Ֆրանսական սպանալիքները հակաշուտած չեն Սուլթանին մտքին մէջ Շէյխ-իւլ-իտլամին աղաղակներովը: Հակաֆրանսական կուսակցութիւնը, անշուշտ, զինաթափ չէ եղած: Բայց չպիտի կրնայ, զեռ տասը շաբթուան միջոցին, իր զիրքերը պահել, առանց ուրիշ խումբերու զօրավիզին: Բարիզէն վճռուած՝ Միւնիք-Պէյի գալուտը և խորհրդարանական կողմերու իր գուշակութիւնները կրնան զիբարցնել Թահսին-Պէյի պայքարը, բայց Սուլթանը զիտէ ճիշդ արժէքը իրեն տրուած յոյսերուն, զորս կը վճարէ:

Պ. Պէտար շեշտելէ վերջ, թէ ի՛նչպէս Սուլթանը՝ չբաւականալով իր ծառաներուն ապահովիչ քաջախեղանքներէն՝ քիչ մը ամէն կողմ զիմեց և թէ ի՛նչպէս Գերմանիոյ կայսրէն, Աւստրիայէն, Անգլիայէն և Իտալիայէն մերժուեցաւ՝ կը շարունակէ:

Իրենց զիրքերովը կամ իրենց յայտարարութիւններովը, բոլոր պետութիւնները, սկիզբէն իսկ, հակառակ եղան Սուլթանին: Մէկը միայն կը թուի վարանիլ, եւ երկու ամիս, թիւրք յամառուի տասը շաբթուան միջոցին, իր կարծիքը կը վերապահէ: Նոյեմբերի առջի օրերուն մէջ միայն, պաշտօնական նօթ մը Պոլսոյ գործակալութիւններուն կ'իմացնէ, թէ « Բուսիոյ զեռպանը, Պ. Չինովիէֆ Պալատ ու Դուռ գացած՝ և ուժգնօրէն խորհուրդ տուած է գոհացում տալ ֆրանսական պահանջումներուն »:

Տարակոյս չի կայ որ Պ. Չինովիէֆի լուսթիւնը՝ եթէ երկարած ըլլար՝ պիտի կրնար շփոթել մեր կասալարութիւնը: Մեր նաւերը Միթիլէն հասնելու վրայ են, եթէ Սուլթանը ինքզինքը միշտ պաշտպանուած կը կարծէ՝ այդ աննշան նաւահանգիստին վրայ ցցուած մեր դրօշակը ծիծաղելի երեւոյթ մը պիտի առնէ շուտով: Իրաւ է թէ Իզմիրի մաքսատունները մօտիկ են, բայց անոնց մեր նաւազներուն կողմէ գրաւուած միւս պետութիւններուն հետ վիրաւորանքներ պիտի յառաջ բերէր, միջազային վաճառականութեան տրուանջները մեր գէմը պիտի գրգռէն Եւրոպան...: Այն ատեն է որ կը խօսի Պ. Չինովիէֆ: Սուլթանը ընդունելով մեր բոլոր պայման-

ները, մեր նաւերը կրնան պատուաւորապէս ձգել Միթիլէնը: Տարակոյս չի կայ ուրեմն թէ թուս յայտարարութիւնը ու է ազդեցութիւն մը ունեցաւ: Բայց ինչո՞ւ ուս զեռպանը աւելի կանուխ չմիջամտեց: Ինչո՞ւ այս երկու ամսուան լուսթիւնը, երբ ամենազոյզն խօսքն իսկ կրնայ խոնարհել Ապտիւլ Համիտը: Կարելի չէ մէջ բերել երկու կառավարութեանց ընդհանուր քաղաքականութիւնը. այդ միջոցին իսկ Չարը Ֆրանսա կուգայ հոչակելու թէ ոչինչ փոխուած է երկու բարեկամ ու դաշնակից ազգերուն յարաբնութեանցը մէջ: Կարելի չէ նոյնպէս մէջ բերել Պ. Չինովիէֆի անձնական պատշաճանքներն ու յղացումները. եթէ անցեալին մէջ եղան այդօրինակ շարժանքներու հպատակօղ ուս զեռպաններ՝ Պ. տը Մօրէնէմի մեծաշնիւղ շնորհազրկուած դաս մը եղաւ: Յայտնի կը թուի թէ իրապէս ընդհանուր քաղաքականութիւնը խնդրի տակ չէր. և սակայն երկու կառավարութիւնները համաձայն չէին այս մասնաւոր պարագային մէջ:

Ո՛չ թէ անհամաձայնութիւն կամ ընդհարում եղած ըլլար, այլ պարզապէս յօտակ համաձայնութիւն ու ամբողջական վիճարանութիւններ չէին եղած: Ֆրանսական նախարարին հրապարակային պահանջումներուն մէջ, թուս կառավարութիւնը բան մը չէր գտներ անշուշտ եպերելի: Բայց մեր նախարարութեան այդ հաստատակամ պահանջումներուն ետին՝ Բուսիան կը նշմարէր կարգ մը կարելի պահանջկոտութիւններ մեր հանրային կարծիքին, մեր մամուլին եւ նոյնիսկ մեր Խորհրդարանին կողմէն: « Թրքական Խնդիր » կ'ըսէր մեր զիւանագիտութիւնը, բայց կը թուէր թէ բովանդակ Ֆրանսան « Հայկական Խնդիր » հասկնար: 1896էն ի վեր շատ մը բաներ փոխուած են ֆրանսական հանրային կարծիքին մէջ: Հինգ տարի պէտք եղաւ: Բայց ճշմարտութիւնը ճանչցուած է այսօր: Ֆրանսան զիտէ որ Հայաստանը միշտ տանջանքի մէջ է: Այն տեղէն ոճիրի հոտ մը կ'ուգայ որ անհանգիստ կ'ընէ ու կ'աժցնէ: 4 նոյեմբերի նիստին մէջ, բոլոր երեսփոխաններն ալ պիտի սլօտան ատիկա: Պ. Բիուէն մինչև Պ. Ալման, ամբողջ Խորհրդարանը համամիտ պիտի ըլլայ, և Խորհրդարանի վերաբացումէն շատ առաջ, մեր լրագրիները, երկու ամիս շարունակ ուրիշ բան ըրած չէին, եթէ ոչ հայկական եղանակը ընդլայնել: Ասկից գատ, ստոյգ է որ ֆրանսական կառավարութեան պահանջումներուն է՛ն կարեւորը եւ է՛ն խիստը Հայաստանի խնդիրներուն կը վերաբերէր: Դուռը և Սուլթանը ամէն բան ըրին ուշադրութիւնները ուրիշ կողմ վարձնելու համար. երեք տարի է ի վեր ուրիշ բանի վրայ վիճած չունին եւրոպական հասարակութեան առջև, եթէ ոչ՝ մեր զրամական պահանջներուն: Իրենց նայելով, Գարափներու միակ խնդիրը՝ հազիւ հաճոյազարդուած թիւ պիտի-Լօռանտօ առնելիքներով՝ զէպի դժտուած մղած պիտի

ըլլար Պ. Քոնոթանը: Բոլոր շարիքը յառաջ պիտի գար այդ ձախորդ խնդրէն եւ այդ անհամբեր գեօպանէն:

Իրապէս, բուն վէճը 1897էն կը սկսի և հայկական շարդերու հետեւանքներէն յառաջ կուգայ: Այդ կոտորածներուն միջոցին, իրենց կեանքը կորսնցուցին մեր ազգակիցներէն ուսնք, աւելի մեծ թիւ մը՝ իրենց ինչքերը: Կարգ կանոնը վերահաստատելու իր այս մասնաւոր եղանակներուն մէջ, տաճիկ կառավարութիւնը միշտ ճանչցած է իր պատասխանատուութիւնը. անկիւ հատուցում խոստացաւ զոհերուն կամ անոնց ժառանգորդներուն, կտրուած գինները ընդունեց, բայց չորս տարիէ ի վեր, ամենափոքր առհաշիւն իսկ չվճարեց: Միւս կողմէն, կոտորածներու միջոցին հայ վիլայեթներու մէջ, մեր գարոցական, ասպնջական և կրօնական բոլոր գործերը կործանեցան կամ ծանրապէս վրնասուեցան: Զաննք վերականգնել խոստանալէ վերջ, տաճիկ կառավարութիւնը ո՛չ միայն կը մերժէ անոնց ծախքերը ընել, այլ նաև կը մերժէ արտօնել անոնց վերաշինութիւնը կամ մեզի թող տալ անոնց ազատ գործածութիւնը: Եւ ահա ճշմարտապէս զիսաւոր վէճը: Փրանսան անո՞ր համար երեք հարիւր տարիէ ի վեր աշխատած պիտի ըլլայ Արևելքի Առաքելութիւնները կոչուած քաղաքակրթիչ գործին, որ՝ կրօնական ըլլալուն համար՝ մեծ, աղւոր, անշահախնդիր ու բովանդակ մարդկութեան օգտակար ըլլալէ չի դադրիր, անո՞ր համար, երեք դար շարունակ, շաղկապ պիտի ըլլայ իր ճիգերն ու զբաւը, որպէսզի՞ մոլեգնութեան երկու ամասներու մէջ՝ կայսերական անասունի մը արիւնտս «փոքրիկ ձեռքերը» աւերեն Փրանսական զթութեան այդ յիշատակարանը, կամ թէ անասունին խենդութիւնները պիտի դարձանուին վերջապէս և քաղաքակրթիչ զթութիւնը պիտի կրնայ վերոկսիլ իր գործը:

Այսպէս մէջտեղ գրուած հարցին, ֆրանսական հանրային կարծիքը մէկ պատասխան մը միայն կ'երեւակայէր, և տեսնուեցաւ արդէն որ ամբողջ Եւրոպան ուրիշ կերպ չէր խորհար: Փրանսան ինքզինքին ու աշխարհի կը պարտի շարիքը դարձանել: Փրանսան, երբ կոտորածներու զոհ եղած իր ազգակիցներուն համար դարձանումներ կը պահանջէ, իր կողմն ունի գրուած իրաւունքը, օրէնքին ու պայմանագրերներու տառն իսկ: Բայց զաշխարհներու ոգին ու ստան ալ, ինչպէս չորս դարերու անընդհատ աւանդութիւնը, անոր իրաւունք կուտան նաև՝ միմիայն մեր ազգակիցները չնկատելու: Մեր հպատակներէն զատ, անկիւ պաշտպանեալներ ունի, որոնց պաշտպանութեան պատիւը պահանջած է միշտ, և այդ պաշտպանեալներուն մէջ՝ ամբողջ մաս մը Հայ ազգէն: Կոտորածներուն ատեն, ֆրանսացի նախարար մը կրցաւ մերժել այս իրաւունքները, որոնք զինքը կը նեղէին՝ զէպի անմիջական յաջողութիւնը իր վագրին մէջ: Բայց արդի նախարարը տրամադիր կը թուի զա-

նոնք նորէն ձեռք առնելու: 1901 հոկտեմբերի ընթացքին, պաշտօնական նօթ մը կը ծանուցանէր թէ Պ. Տէլքասէ կ'ընդունի Պ. Բ. Գիյեաթը, տնօրէն Բրօ Արմենիաի և պատուիրակ հայ խումբերու, և թէ անոր կը հարցնէ նոռագագոյն յայտարարը հայկական տրուունջներու եւ պահանջումներու: Ուրեմն նախարարը իր ազգակիցներէն զատ, մեր պաշտպանեալներուն ալ կը մտածէ: Մասուլին, հանրային կարծիքին, խորհրդարանին, Փրանսայի մէջ ամէն մարդու հետ, նախարարն ալ «Թրքական խնդիր»ը կը թուի թարգմանել «Հայկական խնդիր»: Բայց ահա՛ թարգմանութիւն մը, որ՝ Փրանսայի մէջ ընդունուած՝ չպիտի անցնի գուցէ մեր բարեկամներուն եւ զաշխարհներուն երկիրը: Թուօտան ուրիշ բան չունի ընելիք, եթէ ոչ վաւերացնել մեր ազգակիցները պաշտպանելու մեր փափաքը, բան մը որ արդէն ոչ մէկ կերպով կը նեղէ իր շահերն ու իր հաշիւները: Բայց երբ խօսքը պաշտպանեալներու վրայ է՝ պիտի ուզէր անշուշտ սահմանել բացատրութիւնն ու առարկան: Հայերու պաշտպանութեան մասին ուսուցողութիւնը և մանաւանդ Պոլսոյ ուսուցողութիւնը կարգ մը կարծիքներ ունի, միանգամայն՝ կարգ մը շահեր:

Որովհետեւ Թուօտան է որ, առաջին անգամ, բացայայտ դաշնագրով մը Հայերու պաշտպանութիւնը վրան առած է: Սան Սթէֆանօյի դաշնագրութեան 16րդ յօդուածէն առաջ, Եւրոպան երբեք մասնաւոր պայմաններ պայմանագրած չէր Հայաստանի համար: Փրանսան իր պաշտպանութիւնը տարածած էր զանազան հայ անձնաւորութիւններու կամ համայնքներու վրայ, բայց երբեք՝ ազգին ամբողջութեանը: Անգլիան, կիպրոսի պայմանագրութեամբ, Թուօտան հայկական տեսութեան զէմ կը հանէ՝ Սուլթանի բոլոր ասիական, քրիստոնէայ կամ այլ հպատակներու խոստացուած պաշտպանութիւնը: Սան Սթէֆանօյի սուտական միակ դաշնագրին է որ Պերլինի պայմանագրութեանց մէջ անցուց Հայաստանն ու հայկական հարցը...: Բայց Սան Սթէֆանօյէն վերջ, երկար տարիներու միջոցին, Թուօտա զանց կ'ընէ սահմանել իր Հայերու պաշտպանութիւնը: Յայտնի է սակայն որ ան լաւ գիտէ օկզանական հարկաւորութիւնները ամէն պաշտպանութեան. հաշուածները միայն կարելի է պահպանել, որքեւարին ու որքն է որ կը պաշտպանեն: Թուօտա զիւրանագիտութիւնը կանխատեսած է՝ հաշուածներով, այրիութիւններով ու որբութիւններով լեցուն Հայաստան մը...: 1896ին միայն իշխան Լօպանօֆ օրտակցութեան մը տեղի կուտայ. չըսեք տակաւին թէ ինչ պիտի կրնայ ըլլալ Թուօտաներէ պաշտպանուած Հայաստանը, այլ թէ ինչ պէտք չէ երբեք ըլլայ ան. «Զպիտի հանդուրժեց երբեք Փոքր Ասիոյ մէջ ուրիշ Պուլկարիա մը»: Յետոյ սուտական լուծութիւնը աւելի անթափանցելի կը դառնայ մինչև Պ. Զինովիէֆի Պոլսոյ զեօպանատան գալուտը (Յուն,

ուար 1898): Առ ի չգոյէ բացայտյալ տարաբութիւնս ներու՝ նոր գեապանին արարքները դոնէ յտակօրէն պիտի խօսին: Վերջապէս խնդիր մը կը ստիպէ Ռուսները սահմանելու իրենց ապագայ քաղաքականութիւնը հայկական թիրաքիոյ մէջ: Անաստուրի երկաթուղիներուն հարցն է ատիկա:

* * *

1856էն ի վեր, ուր Անգլիացիները ձեռք բերին առաջին արտօնութիւնը, Փոքր Ասիոյ երկաթուղիները երեք փուլերէ անցան, այն անտեսական և քաղաքական յղացումներուն համեմատ, զորս՝ նախ Անգլիացիները և Ֆրանսացիները, յետոյ Գերմանացիները եւ այսօր Ռուսները կազմեցին ասիական մեծ թերակղզւորին ապագայ դերին վրայ: 1856էն 1886, Անգլիացիներն ու Ֆրանսացիները շինեցին իրենց թափանցումի ճամբաները: 1886ին Գերմանացիները սկսան իրենց փոխադրութեան մեծ ճամբաները: 1900ին Ռուսիան թուղթի վրայ կը գծէ իր գրաւումի գիծերը:

Հօս, Պ. Պէտար, մանրամասնաբար ծանրանալէ վերջ Փոքր Ասիոյ աշխարհագրական դիրքին, անոր զանազան կողմերը հաստատուած ու ծրագրուած երկաթուղիի գիծերուն և անոնց շուրջը կայացած քաղաքական հաշիւներու վրայ, կ'ըզրակացնէ:

1886ին, Գերմանացիները նոր յղացում մը բերին: Այլ ևս միայն Փոքր Ասիայի վրայ չէ խնդիրը: Անշուշտ խնդրի առարկայ է ան միշտ և Գերմանացիները զանց չեն ըններ զայն: 1850էն ի վեր, Ռուս, Ռուսներ և Ռուսպէրթիս Գերմանիոյ կը քարոզէին «խաղաղական նշանակութիւն»-ը, «ազգային աշխատութեան կազմակերպութեան միջոցաւ Անաստուրի կերպարանափոխութիւնը», և նոյն իսկ Փոքր Ասիոյ գաղթագործութիւնը: Գերմանացիները իրենց գիտնականները, իրենց աշխարհագրագետներն ու իրենց վաճառականական ցննիչները դարձուցին գէպի այս երկիրը: Զայն չիրառիկ ու գործի եկող նկատեցին, նուազ՝ սակայն, քան ինչ որ յուսացեր էին նախապէս: Քանի գերմանական ուսումնասիրութիւնները աւելի առաջ կը թափանցէին, այնքան Փոքր Ասիոյ առաւելութիւնները, իր բնակչաւորումի և հարստութեան կարելիութիւնները աւելի պզտիկ կ'երևային: Բայց այդ զրոնաբաժայտ օտարահարթէն անդին կը նշմարուէին Միջագետքի օջանչելի գաշտերը, մեծ, աստուածաշնչական գետերու օձապտոյտ ընթացքը, Երկրաւոր Արքայութեան հողը և, Տիգրիսի ու Եփրատի ափանց վրայ, աւերակները հոկայական քաղաքներու, Նինուէ, Բաբելոն, Քրէսիֆօն, Պաղտատ, որոնք առաջուց կ'ըսէին ապագայ մեծութիւնը այդ՝ այսօր ամայի՝ երկրին, — և հետուն, խորը կը հայելիանային Պարսկական ծովածոցին շու-

րերը, որոնք շիփ շիտակ Հնդկաստանի հրապարակները կը տանին: Փոքր Ասիոյ մէջէն կտրել անցնելով՝ Գերմանացիները այդ Երկիրն էր որ կ'ուզէր վազել գերմանական գիտութիւնը: Բարեխառնաբեր, անցեալին է՛ն հարուստ հողը եւ ներկայիս՝ գաղթագործութիւնէն գեղեցիկ դաշտը, կը ախտոգոծէր իր տետրակը Պ. Սթրենժէ, ամբողջացնելու համար տօքթօր Բարձի տետրակը, Փոքր Ասիան, գերմանական գաղթագործութիւն դաշտ. իսկ ամբողջացնելու համար տօքթօր Բիւթերի ձեռնարկած Փոքր Ասիոյ աշխարհագրոյց քարտէսները գերմանական Արքոնա մարտանաւը կ'երթար հետազօտել և մանրակրկիտօրէն գծագրել Պարսկական ծովածոցին նաւամատօյնները:

1889ին, այս ծրագրիներուն իրագործումը սկսան. Գերմանացիները Հայտար-Փաշայէն իզմիտ թրքա-անկլօ-յունական գիծը ձեռք բերին: Ատիկց է որ ուրիշներ՝ իրենցմէ առաջ երազեր էին արդէն կտրել Ասիան և ամենէ կարճ ճամբով կապել կեդրոնական Եւրոպան Պարսկական ծովածոցին, Վիեննան ու Պոլիսը՝ Պաղտատին: Հագիւ գերմանական ձեռքերու մէջ անցած՝ գիծը ուժգնօրէն յառաջ տարուեցաւ, մինչեւ անաստուրիական օտարահարթին սեմը: 1891ին Էսկի-Շէհիր հասաւ: Բայց անկարելի է այդ օտարահարթը կտրել ուղիղ գծով Էսքի-Շէհիրէն Միջագետքի դաշտին «գունները»: Փոքր Ասիոյ կեդրոնը աւազի, ճահիճներու եւ աղի լիճներու ամայութիւն մըն է, առանց քաղաքի, առանց կարելի մշակութեան, առանց անուշ ջուրի: Ամէն ատեն, մարդկային ճամբաները այդ անապատին շուրջը դարձած ըլլալու են հարաւէն կամ հիւսիսէն: Դէպի Եփրատ՝ Հիւսիսի ճամբան է որ է՛ն կարճն է: Հին արքայական ճամբան է ստ Ասորեստանցիներուն, Պարսիկներուն և Բիւզանդացիներուն, նոյնպէս ճամբան է ատ հայկական ու պարսկական կարաւաններուն: Էսքի-Շէհիրէն Տիարպէքի, Եփրատի դուռը, և Մուսուլ, Տիգրիսի հունը, մեծ քաղաքներու շարունակութիւն մը, էնկիւրի, Եօզղաթ, Սըվազ, Խարբերդ, զլխաւոր կայքերը կ'որոշին: Գերմանացիները այդ ճամբան կը զարնեն հիւսիսէն մինչեւ Էնկիւրի (1892): 1893ին, Սուլթանը այդ մեծ երկաթուղիին վրայ կը խօսի շարունակ, որ իր ձեռքին տակ պիտի գնէ իր սիւրբ-արաբական գաւառներուն տուրքերը ու երբեմն կասկածելի հաւատարմութիւնը: Ամենուն, մանաւանդ մեր գեոպանին, կը գովաբանէ այդ Էնկիւրի-պաղտատ մղումին հեռապատկերները: Գերմանացիները ատոր ձեռնարկելու բոլոր բարեկամեցողութիւնը ունին, բայց կը պակասի իրենց դրամը եւ զոր հինգ տարի շարունակ իզուր կը փնտռեն: Վերջապէս, 1898ին, Ֆրանսացի դրամատէրներու հետ համաձայնութիւն մը գրամ կը հայթայթէ իրենց: Մեծ ծրագիրը ձեռք կ'առնուի... Բայց Սուլթանին ուրախութիւնը և թրքա-յունական պատերազմին

գասերը ուսու կասկածները արթնցուցած են։ Երոսպայի մէջ Ֆրանսական Պոլիս-Սելանիկ գիծն է որ զեռ որ Յունաստանի գէմ թրքական զօրքին շարժուը կարելի ըրաւ, զերմանական Էնկիւրի-Սըվազ գիծը կարելի պիտի ընէր միևնոյն զօրական շարժուը ուսուական օաճմանա, զլուիններուն գէմ Ասիոյ մէջ։

Գերմանացիները պարտին լքել հիւսիսի ճամբան ու ձեռք առնել նորէն, Էսքի Շէհիրէն, ադի անապատին հարաւի զարձքը։ Այդ հարաւի ճամբան շատ աւելի երկար է։ Քէթաճահայէն եւ Աֆիուն-Քարա-Հիւարէն (որ իզմիր-Քասապայի գիծը կուգայ միաւորիլ անոր) առանց զժուարութեան ֆօնեա կը հասնի։ 1898ին իսկ, այս առաջին կտորը շինուած է։ Բայց ֆօնեայէն ան զին, պէտք է Տարուրի մէջէն հասնիլ Կիլիկեան Դաները և յանկարծ իյնալ Աստանայի ծովեզերեայ դաշտին մէջ, յետոյ Ալեքսանտրէթի ծովածոցին շուրջը դառնալ, Ամանիսի խորտուրտ գտնիքները ելլել, Մարաշի կիրճերը անցնիլ և հասնիլ վերջապէս Եփրատի դաշտը։ Երկար ու սուղի նստող շինուելու համար՝ այս գիծը զժուար պիտի ըլլայ շահագործելու, փոխն ի փոխ խորտուրտ վերելքներու և գրեթէ վերէն վար շիփշիտակ էջերու պատճառաւ։ Ահագին ծախքեր պէտք պիտի ըլլան։ Գերմանացիները ստիպուած են կոչ ընել օտար զրա-մագլուխներու։ Դործը միջազգային կը դառնայ։ 100ին 40 Գերմանացիներուն, 100ին 40 Ֆրանսացիներուն, 100ին 20 վերապահուած ուրիշներու, Ռուսերուն, եթէ կրնան վճարել, Անգլիացիներուն, եթէ կ'ուզեն մանել այս կարգադրութեան մէջ։ Անգլիացիները աճա-պարանք ցոյց չեն տար բնաւ։ Յայտն է որ Ռուսերը ո՛չ մէկ միջոց ունին եւ ո՛չ մէկ փոխատու կը գտնեն։ Եւ սակայն՝ առանց Ռուսերուն՝ գործը անլուծելի կը դառնայ։ Որովհետեւ, այդ կողմէն ալ, գիծը Պ. Զի-նօվիէֆի ծրագրերներուն կը բաղկի։

Այդ ծրագրերը, երրորդ փուլին մէջ կը մտնենք։ 1900 փետրուարին, Քօնեա-Պաղատաի գիծը Գերմա-նացիներուն արտօնուած ըլլալով, ուսու զեւպանր փո-խարինումներ կը պահանջէ։ Ռուսերու համար տարա-մերձ իրաւունքը կ'ուզէ շինելու և շահագործելու ապա-ջայ ամէն գիծ իրենց ասիական օաճմանագլուխներուն զրացի վիլայէթներուն մէջ։ Մեղսակից Գերմանիոյ կոթնած, Ռուսիան Սուլթանէն բերանացի խոտուումը կ'առնէ Էրզրումի և Տրապիզոնի նահանգներուն համար։ Սուլթանը կը յայտարարէ նաև թէ Սըվազի նահանգին մէջ միմիայն թիւրքերը՝ օտարները զուրօ ձգելով՝ ար-տօնութիւններ պիտի ստանան։ Նայեցէք քարտէսը եւ պիտի տեսնաք անմիջապէս թէ ի՞նչ կրնան նշանակել հասարակ լեզուով այդ յանձնառութիւնները։

Տրապիզոնը, Սիւ Մովան վրայ, այն նաւահան-գիտուն է որ կը տանի Մեծ Հայքի գաւառները։ Էրզրումը ներքը հրապարակն ու ամրոցն է ուր կը խոռոչուին, կը

միանան երկու ճամբաները, որոնք Մեծ Հայքի գաւառ-ներուն կը հասնին։ մէկը ասիական Ռուսիայէն կուգայ, Կարոի ճամբով, և միւրը պարսկաստանէն՝ Պայազիտի ճամբով։ Սըվազ, հայ վիլայէթներու կեդրոնը, քառուղին է բոլոր ճամբաներուն, որոնք իրարմէ կը հեռանան զէպի Էրզրում և Ռուսիա, հիւսիսէն զէպի Սաժոսն եւ Մե Մով, արեւմուտքէն զէպի Էնկիւրի և Պոլիս, հարաւ-արեւմուտքէն զէպի Քօնեա եւ Ատաշիա կամ Իզմիր, հարաւէն զէպի Մարաշ եւ Ալեքսանտրէթի ծոցը։ Սօ-վորական լեզուով, Ռուսիան կը պահանջէ ուրեմն ա-պագայ տիրացումը կամ հսկողութիւնը Մեծ Հայքի զը-րաւումին համար բոլոր հարկաւոր գիծերուն։ Ամենա-փոքր մէկ կտորին իսկ անմիջական արտօնութիւնը չուզեր։ Իր ձեռնարկներուն մէջ մէթոսիկ է։ Չինաստանի խըն-զիրը զինքը կը զբաղեցնէ եւ, որքան որ իր ուժերն եւ ուշադրութիւնը հոն բոնուած ըլլան, պիտի գոհանայ ան հօս կանխարգել զգուշաւորութիւններով, և յանձ-նառութիւններով։ Բայց զբառը յանձնառութիւններ կ'ուզէ և քանի շինական խնդիրը հետզհետէ կը կարգադրուի, այնքան աւելի ստիպող կը գտնայ։ Երբ Բէքիւնի կող-մէն ազատ պիտի ըլլայ, կ'ուզէ որ Պոլսոյ մէջ բոլոր նախապատրաստական աշխատութիւնը կատարուած ըլլայ։ Անգամ մը որ Մանչուրիան ձեռք անցնէ և Բօթ-Ար-թիւրը վերջնականապէս ապահովէ, իրեն պիտի մնայ միայն հոս փոխադրել իր մարդիկը, իր կահուկազմածը և իր մէթոսները։ Որովհետեւ հոս պիտի սկսի ան զէպի ուրիշ ազատ ծով մը մղուը։ Երոսպան ուզէ չուզէ, Ալեքսանտրէթի ծովածոցին եզրը Բայաս, այս կամ այն ձևին տակ նոր Բօթ-Արթիւր մը պիտի ըլլայ, որ մը, և թրքական Մեծ Հայքը՝ նոր շինական Մանչուրի մը։

Այսպիսի են ահա Պ. Զինովիէֆի յղացումները, և ապա՝ ուղապէս կայսերական զիւանատան այս նախկին սնօրէնը հաւատարիմ թարգմանն է միայն իր կառա-վարութեան։ Կը հասկցուի՞ հիմա թէ երկու ամիս վա-րանած ըլլայ Ֆրանսական պահանջումները պաշտպա-նելու, և թէ մեր «թրքական խնդիրն» «հայկական խնդիր» թարգմանութիւնը Բէթրսպուրի վաւերագրումը ունեցած չըլլայ, և կը հասկցուի՞ մեր նախարարին լե-զուն խօրհրդարանին առջեւ, որ վերջին նոյեմբերի 4ին անոր կը պատար «Հայաստանը»։ Նախարարը, յայտ-նապէս շփոթած՝ կը մերժէր ամէն խոտուում։ Արդեօք բարեկամ պետութեան միջամտութիւնը հայկական խընդ-րին վրայ յանձնառութեան յետոյ՝ էր որ վերջերս ձեռք բերուեցաւ։ Պ. Տէլքասէ մօտ օրէն պիտի պարզէ իր՝ Հայաստանի մէջ ունեցած քաղաքականութեան սկզբ-բունքները։ Պէտք է սպասել։ Անոնք, որ չեն մոռցած կրեւտական խնդիրն մէջ իր ունեցած ընթացքը, կը յուսան որ պիտի դիտնայ ան վերագոնել իր 1898ի լեզուն։ Բայց կէտ մը կայ, զոր հիմակուց պէտք չէ ստուերի մէջ թօզուլ։ Ռուսերը Մեծ Հայքը կ'ուզեն ու

մեր ընդհանուր քաղաքականութիւնը մեզ կը կապէ առ նոնց նկատմամբ: Ասիկա ըսել է որ հայկական խնդիրը անհպելի է: Մեծ Հայքը ամբողջ Հայաստանը չէ՛, եւ առ այժմ, Ֆրանսական խղճմտանքը պիտի զոհանար, եթէ գոնէ ջարդերը առ յաւէտ վերնային Փոքր Հայքի սա անկիւնը, որ՝ անյիշատակ ժամանակներէ ի վեր իօկական թեւարկութիւն մը գործադրած ենք, սա զիւցազնական Զէյթունին մէջ, որ՝ բոլորովին զրացի Պէյրութի ծովուն կրնայ եւ պէ՛տք է գառնայ հայկական Լիբանանը: 1863ին, Ֆրանսայի զեապանը կը յայտարարէր Ք. Դրան, թէ «Ֆրանսան միշտ անկախ ու տուրքէ ազատ ճանչցած է Զէյթունը»:

ՎԻՔԹՕՒՒ ՊԷՌԱՐ

(Թրվիտ տը Բասի)

ՖՐԱՆՍԱ ԵՒ ՀՍՅԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

1902 Յունուար 21 երեքշաբթի օր տեղի սանեցաւ Ֆրանսական Խորհմագարանին մէջ հայկական հարցի մասին նոր հարցապնդում մը, զոր քարգմանարար կը հրատարակենք:

Նախագահը.— Խորհրդարանը կը յիշէ թէ ինքը արտաքին գործերու պիտոճէի վիճաբանութեան կցած է կարգ մը հարցապնդումներ: Առաջինը Պ. Ռուանէինն է՝ ի մասին այն միջոցներուն զորս կառավարութիւնը ձեռք առած է կամ կը մտադրէ առնել արգելելու համար Հայաստանի ջարդերուն վերագործը, եւ ապահովելու Պերլինի զաշնադրութեան պայմանները:

Խօսքը Պ. Ռուանէինն է, իր հարցապնդումը պարզելու համար:

Պ. Կիւթիւմի Ռուանէ.— Կը խնդրեմ որ Խորհրդարանը իր բարեացակամ ուշադրութիւնը նուիրէ քանի մը վայրկեան եւ թող տայ ինձի մտքի ամբողջ ազատութեամբ պարզելու այն մէկ քանի հակիրճ զիտողութիւնները զոր պիտի ներկայացնեմ իրեն: (Խօսեցե՛ք, խօսեցե՛ք):

Նախ եւ առաջ ներողութիւն կը խնդրեմ որ այսքան ուշ մնացած ատեն մը տեղի կունենայ այս վիճաբանութիւնը: Երբ պատիւն ունեցայ հարցապնդումի խնդրանք մը ներկայացնելու, Ֆրանսայի Թիւրքիոյ հետ զիւսանադիտական յարաբերութիւնները զեռ նոր խզուած էին: Սակայն եւ այնպէս, տրուած ըլլալով մեր ներկայա-

ցուցին կողմէն բանաձեւուած պահանջներուն բնոյթը, ոչինչ կրնար կանխատեսել տալ թէ արտաքին գործոց նախարարը՝ այդ պահանջները պնդելու համար՝ օր մը վերջ, թրքական ջուրերուն մէջ նաւարածին մը պիտի զրկէր: Այն ատեն նոյնպէս ոչ ոք կը նախատեսէր թէ կառավարութիւնը՝ պահանջքի մը զանձուծին համար՝ մտքէն պիտի անցնէր առնելիքի օպանագիր ներկայացնողներու փոխել մեր պատերազմական նաւատորմի զինուորներն ու զբազաւորները, որոնք՝ հանրային ըմբռնումով՝ սահմանուած են ազգային աւելի բարձր գործերու կատարման: (Շատ աղէկ, շատ աղէկ): Այն յուզումը զոր մեր նաւատորմի ձեռնուածը առաջ բերաւ հանրային կարծիքին մէջ, հասաւ մինչեւ հոս, այս ժողովը, որ նոյնհետայն ուզեց վիճաբանութեան նիւթ ընել Պ. Սենպատի հարցապնդումը: Այն ատեն չի պահանջեցի որ իմ հարցապնդումս ալ վիճաբանութեան զրուի, որովհետեւ կը կարծէի, կը յուսայի — ե իմ պատրանքս՝ այս պարագային՝ կը վկայէ, թէ հակառակութեան եւ անվստահութեան ո՛ր եւ է սիթթէմատիք կանխամտածում չեմ գնիր այս վիճաբանութեան մէջ — կը յուսայի՝ կ'ըսեմ՝ թէ այն զանազան շարժողութիւններուն մէջ, որոնք յարգելի Պ. Տէլքասէն հաստատած էին՝ Թիւրքիոյ զէմ ճնշող միջոցներ ձեռք առնելու իր յանկարծական որոշմանը մէջ՝ հայկական գաւառներու կացութիւնը իր զրգիչ բաժինը ունեցած էր կառավարութեան մտքին վրայ: Նոյնիսկ՝ Պ. Բօշէնի ի պատասխան՝ նախարարին բեմէն տուած բացատրութիւններէն վերջ, շարունակեցի հաւատալ թէ շատ մը կէտերու վրայ կառավարութեան պահած լուծիւնը խոհեմ վերապահում մըն էր միայն, բայց թէ հայերու պահպանումը օտար մնացած չէր իր վերջնական վճռորոշումներուն:

Պ. Ռուանէն զիտել կուտայ, թէ ինչպէս կարգ մը պարագաներ, (ի միջի այլոց Պ. Վալտէք Ռուսօի 4 նոյնիտոսին մէջ ըրած մէկ յայտարարութիւնը, որով Ֆրանսական նախարարապետը կը շեշտէր կառավարութեան մասնագրութիւնը Ֆրանսայի հմայքը շինող բարոյական շահերը չի զոհելու) զինքը մղած էին լաւատես ըլլալ: Բայց Ֆրանսական նաւատորմին ետ կանչուելէն վերջ ալ ամէն յոյս ի գերեւ կ'իլլէ:

Կիտապաշտօնական նօթեր, կ'ըսէ Պ. Ռուանէ, մեզի իմացուցին որ Ֆրանսան պահանջուած բոլոր զոհացումները ձեռք բերած էր սուլթանէն: Ոչ մէկ տեղ տեսայ որ Պ. Տէլքասէ Հայերուն ի նպատակ ո՛ր եւ է բան պայմանագրած ըլլար, ո՛ր եւ է զիմուած եղած ըլլար մեր Կ. Պօլսոյ ներկայացուցչին կողմէն, առաջն առնելու համար սիթթէմատիք կոտորածներու եւ թալաններու որոնց ենթարկուած են հայերը սուլթանին կամքովը, որ անձնապէս պատասխանատու է քանի որ իրմէն կուզայ հրամանը Հայաստանի մէջ գործուած բոլոր ոճիրներուն ծափահարութիւններ ճախ կողմէն):

Կուզամ հարցն'ը արտաքին գործերու Պ. նախարարին, թէ ինչո՞ւ այս լուծութիւնը կամ այս մոտադրումը կը խնդրեմ նաև որ հաճի բացայայտ ու ամենուն մատչելի լեզուով մը ամբողջացնել իր 4 նոյ.ի յայտարարութիւնները: Այո՛ կամ ո՛չ, թող ըսէ մեզի, թէ հայերու լքումը՝ Ապտիլ Համիտի կողմէ հետապնդուած մէթոտիք բնաջնջումին, թէ քաղաքակրթութեան ու մարդկութեան գէժ այղքան ոճիրներու արիւնոտ սարքողին անպատիժ թաշը, լքում մը չի կազմէ՞ր բարոյական շահերու այն հայրենի աւանդին, զոր անխաթար պահել ուզել կը յայտարարէր Պ. Նախարարապետը (ժափահարութիւնը ճախակողմէն):

Հակառակ այն լուստես տեղեկութիւններուն զոր այս բեմը կը բերէր յարգելի Պ. Տէլքասէն, Ֆրանսա հասած վկայութիւններու ամբողջութիւն մը կը հաստատէ, թէ 1900-1901 տարիներու ընթացքին, Հայաստանի ամէն կէտերուն վրայ, շատ մը խեղճեր ինկած են, հարուածներուն տակ մերթ թիւրքերու և մերթ քիւրտերու, որոնք կը թալանեն կառավարութեան հաճութիւնովը: Երբ թիւրքերու կրօնական եռանդը կամ քիւրտերու անկըշտութիւնը նուազի, տեղական իշխանութիւնները նախաձեռնութիւնը կ'ունենան հայերու գէժ հալածանքին:

Արտաքին գործերու պ. Նախարարը ըսաւ մեզի, թէ հայերը ենթակայ էին այնպիսի կանոնադրերու, որ կ'արդիւնէին զիրենք՝ եթէ ոչ ապրելու, զոնէ բարգաւաճելու, և կ'աւելցնէր.

«Աւելի մասնաւորապէս ընդհանուր անապահովութենէն է որ կը տառապին, և խիստ յաճախ անպատիժ մնալը իրենց գէժ գործուած ոճիրներուն ենթադրելի՞ութայ, թէ առանց սոսկումի կը նայուի անոնց վրայ»:

Չեզի պիտի ջուջնեմ, Պարոններ, թէ արտաքին գործոց Պ. Նախարարարին տուած տեղեկութիւնները անկատար են: Իրապէս, անշատ ու պատահական ոճրագործութիւններ չէ որ կը կրեն հայերը: 1900ին և 1901ին, եղած են այն դրութեան մէջ, ուր գտնուեցան 1892-1893ին, նախընթացին՝ մեծ ջարդերուն, որոնք յաջորդեցին: Եւ ամէն բան կարծել կուտայ, թէ սուլթանը, քաղաքակրթութեան գէժ այդ ոճիրներուն ուղղակի և պատասխանատու հեղինակը, չէ լքած իր բնաջնջումի ծրագիրներուն հետապնդումը:

Ո՞ր կը վերջանայ անհատական մարդասպանութիւնը և ո՞ր կը սկսի շարքը...:

Հոս պ. Ռուանէ, Բրո Արմէնիակէն քաղուած ահանատեօի վկայութիւններ ու մանրամասնութիւններ մէջ բերելով, կ'ապացուցանէ, թէ ո՛չ թէ անշատ ու պատահական ոճրագործութիւններ են, այլ 1892-93ի դէպքերուն կրկնութիւնն է որ տեղի կ'ունենայ և թէ հայ բնաջնջումի ծրագիրն է որ յառաջ կը տարուի:

1892-93ին, կը շարունակէ Պ. Ռուանէ, Եւրոպան տեղեկացուած չէր, քանի մը տարի վերջը միայն իմացաւ ան պատահածները, երբ 1896ի համայնական

շարդերովը, փորձեցին հայ ազգութիւնը լմնցնել. այն ատեն խորունկ օահմուկումի և զայրոյթի շարժում մըն էր որ ամէն երկրի մէջ, ամէն կուսակցութենէ մարդերու խղճմտանքը թունդ հանեց: Պէտք չէ որ Ֆրանսան միեւնոյն անգիտութեան մէջ մնայ. ասոր համար է որ հարցապնդումս ուզեցի ընել: Միևնոյն ատեն որ պիտի ուզէի մղել արտաքին գործերու Պ. Նախարարը՝ մեզի ըսելու, ինչ որ կը խորհի այդ կացութեան մասին, ինչ միջոց որ կրնայ ձեռք առնել արդիւնելու համար 1894-1896ի իրաց վիճակին վերադարձը, կուզեմ նաև այս բաները բեմէն հրապարակել սրովհետև երբեմն, ինչպէս արտաքին գործոց նախարարը շատ լաւ գիտէ, մասուլը կը լռէ՝ հաճոյակատար՝ եթէ մեղսակից ալ չըլլայ (շատ շատ, շատ շատ, ժայրագոյն ճախէն):

Պէտք չէ որ վաղը ելլեն ըսեն մեզի, ինչպէս ըսին 1897ին, թէ Եւրոպան բան մը չըրաւ, թէ Եւրոպան ջարդերուն առաջը չառաւ, սրովհետև տեղեկ չէր կացութեան: Արդարև կացութիւնը այսօր այնքան զարշիլ է որքան էր երէկ: Անտանելի է ան, ու չի կրնար երկարել առանց աղէտը մը յառաջ բերելու: Երբ, 4 նոյ.ին, առանց մանրամասնութիւններու մէջ մտնելու, արտաքին գործոց Պ. նախարարին ուշադրութիւնը հրաւիրուեցաւ այս եղերական կացութեան վրայ, պ. Նախարարը մեզ պատասխանեց համառօտիւ. «Բայց խնդիրը եզակիսօրէն զժուարալուծելի է: Ոչ մէկ տեղ հայերը մեծամասնութիւն կը կազմեն, անոնք ցրուած են անսահման մակերեսովի մը վրայ, և գրեթէ ամէն տեղ փոքրամասնութիւն կը կազմեն»:

Պատճառն այն է որ պ. Տէլքասէ չէ զգուշացած այն կամայական բաժանումներէն, որոնք կը դիմէ թիւրք վարչութիւնը խնդրելու համար հայերը այն բնակչութեանց թուոյն մէջ որոնց կը կցէին զանոնք: Բայց աշխարհագրական բնական բաժանումները չին կրնար աւրուած ըլլալ սուլթանի իրատէնքովը: Իբրև օրինակ պիտի յիշեմ Վանի սանճագը, ուր միւսիւմանները (քիւրտ կամ թիւրք) միայն 61,000 են, 64,000 հայու և 6,000 ալլազան կրօնքներու և ցեղերու պատկանող բնակչութիւններու գէժ:

Արդարև, անվիճելի է, թէ հոն, Մուշի սարահարթին վրայ, Սասունի ձորերուն, Զլթունի կիրճերուն մէջ, ժողովուրդ մը կայ, որ գիտակցութիւնն ունի իր գոյութեան, ժողովուրդ մը որ կ'ուզեմարի, որ կը մահանայ, և որ Եւրոպան կը կանչէ իրեն ձեռնտու և օգնական ըլլալու (շատ շատ, շատ շատ, ժայրագոյն ճախէն):

Պահ մը յետոյ, արտաքին գործոց պ. Նախարարը պիտի ըսէ մեզի թէ Ֆրանսան՝ Պերլինի պաշնագրութեանց ստորագիր՝ Եւրոպայի՝ հայ ժողովուրդին հանդէպ յանձնառութեանց վեցերորդ կամ եօթներորդ մասով միայն պատասխանատու է: Առաջոց կը պատաս-

խանեմ իրեն, թէ ասանկ հարցի մը մէջ, Ֆրանսան՝ ոչ թէ միայն իր անցեալովն ու իր աւանդութիւններովն, այլ իր քաղաքական շահերուն բնոյթովն իսկ՝ եզակա- նօրէն հեշտ գիրք մը ունի, անմիջապէս միջամտելու համար:

Եւրոպական ազգեր կան, որոնց հողատիրական ցանկութիւնները՝ կրնան կասկածելի ընծայել գիրենց՝ Հայաստանի նպատ իրենց միջամտութեան մէջ: Բայց Ֆրանսան ոչ մէկ հողային շահ ունի հոն: Մեզի համար, Հայաստանի մէջ, մարդկութեան, քաղաքակրթութեան եւ արդարութեան շահ մը կայ միայն: Եւ կ'ըսեմ ահա, որ ստիկա, է՛ն առաջ, զերազանցօրէն Ֆրանսական շահ մըն է:

Պարոններ, Ֆրանսայի անունը հասած է մինչեւ հոն իր ազատական ազգի, իրաւունքի պաշտպանի նը- շանկութեամբը: Կը հարցնեմ արտաքին գործոց պ. Նախարարին մեզի ըսել ինչ որ ըրած է, այս պարտադրին մէջ, Հայերուն համար, արդարութեան համար, մարդ- կութեան համար, քաղաքակրթութեան համար, այսինքն՝ Ֆրանսայի համար (Մափաճարոտքիւններ ծայրագոյն ձախէն),

Պ. ՏԷԼԵԳՐԱՍԷԻ ՊԱՏՄԱՆՈՒՆԸ

Պ. ՏԷԼԵԳՐԱՍԷ.— Պարոններ, յարգելի պ. Ռուանէն պէտք եղածին չափ տաղանդ ունի եւ այն դատը, զոր պաշտպանեց, պէտք եղածին չափ համակրելի է, քանի որ մարդկային է, զանց ընելու համար՝ կտո՞ւ վարութեան Արեւելքի մէջ բռնած դիրքէն՝ եզրակացնել երեւակա- յական հակադրութիւններ ու փաստեր, զորս անձիշտ կը գտնեմ:

Յարգելի պ. Ռուանէն ցաւ յայտնեց, որ օսմանեան ջուրերուն մէջ մեր նաւատորմին ներկայութենէն օգ- տուած չըլլանք, Հայաստանի հարցը յարուցանելու համար:

Շատ հաւանականաբար, արտաքին գործոց պիտո- ճէի վիճաբանութեան ընթացքին, առիթ պիտի ունենամ բացատրելու, թէ Ֆրանսական գործողութիւնը պէտք էր դադար օսմանեան ջուրերուն մէջ, անմիջապէս որ զայն վճող տարածքներէն Ֆրանսական գատը կը դադար: Բաց աստի, ոչ մէկուն բան մը սորվեցուցած պիտի չըլլամ հոս, երբ հաստատեմ, թէ Հայաստանի խնդիրը՝ Հայաստանի ինչպէս նաեւ Մակեդոնիոյ մէջ ապահո- վութեան խնդիրը, այնպիսի հարց մը չէ զոր Ֆրան- սան կարենայ կամ պաշտի առանձին կարգադրել թիւր- քիսյ հետ: Էսպէս միջազգային հարց մըն է առ, որու մասին թիւրքիսն՝ Պերլինի վեհաժողովին՝ յանձնառու- թիւններ օտանձնեց պետութեանց հանգէպ, յանձնառու- թիւններ որոնց անտարբեր մնալէ հետո է Ֆրանսան և որոնց վրայ կը յուսայ որ պետութիւնները յարմար պիտի գտնեն աւելի մասնաւորապէս զարձնել իրենց ուշադ-

րութիւնը: (Շա՛տ շառ, շա՛տ շառ):

պ. Է. Վայեան.— (Միջամտելով) պէ՛տք է հրաւիրել իրենց ուշադրութիւնը:

Պ. ՏԷԼԵԳՐԱՍԷ.— Բայց, Հայաստանի խնդիրը Ֆրան- քօ—թիւրք վեճին խառնել, Եւրոպային իրաւունք ու ա- ռիթ տալ պիտի ըլլար անոր միջամտելու, բան մը ուրկէ հարկ էր խուսափել ամէն բանէ առաջ: Երկա- րածգել պիտի ըլլար անոր տեսչութիւնը, երբ մանա- ւանդ յայտնի է, թէ այդ վեճը լաւ վերջանալու հաւա- նականութիւն ունէր, վերջանալով, ինչպէս վերջացաւ, այսինքն՝ շատով: Ատիկա, վերջապէս, կրկնապատկել պիտի ըլլար մեր զժուարութիւնները. առանց ո՛ր և է կերպով, բարուցելու Հայերուն կացութիւնը:

Շատ ստոյգ է, թէ այդ կացութիւնը ա՛յն չէ, ո- ռուն կը խորհէր Եւրոպան, երբ, պերլինի գաշնագրու- թեան ՅԱՐԿ. յօդուածով հարկադրեց թիւրքիոյ «Հա- յաբնակ գաւառներու մէջ հարկաւոր բարեկարգութիւն- ները գործադրելու եւ մանաւանդ Չերքէզներու եւ Քիւր- տերու զէմ ա՛ռնց ապահովութիւնը երաշխաւորելու» պարտականութիւնը:

Պ. ՏԷԼԵԳՐԱՍԷ յիշեցնելէ, վերջ թէ Պերլինի վեհաժո- ղովը վարանեցաւ՝ Գրան ստանձնած պարտաւորութիւն- ներուն անգործադրութեան պարագային զէմ կանխաւ հարկադրիչ միջոցներ որոշելու, եւ թէ այդ վարանումին պատճառը ուրիշ բան չէր, եթէ ոչ պետութեանց միջեւ ծանրակշիռ անհամաձայնութիւններ գրգռելու վախը, կը շարունակէ:

Այսպէս, պարոններ, ամէն բանէ վեր՝ երկիւղ կայ, անհատական կամ հաւաքական ստիպիչ գործողութեամբ մը, յարուցանելու այնպիսի խնդիրներ, որոնց կարգադ- րութեանը ոչ ոք պատրաստուած է, եւ ոմանց լուծումը ոչ ոք կը կարծէ թէ ձեռք կրնայ բերուիլ՝ առանց զուցէ ընդհանուր տակնուվրայութեան մը վտանգին:

Ո՞վ կրնայ ճշգիւ այս երկիւղին բաժինը Հայաստա- նի և Կ. պօլսոյ 1894ի, 1895ի և 1896ի ղեպքերուն մէջ:

Բայց այդ ղեպքերը նոր կացութիւն մը օտեղծեցին: Եւ մարդ կը մղուի մտածել թէ անոնց վերագրածը չը՞ պիտի յարուցանէր, չը՞ պիտի մէջտեղ գնէր, իրենց բոլոր սաստ- կութեամբը, այն սարսափելի խնդիրները, զորս իմաս- տութիւն կը համարուի մէկզի ընել: Այդ ղեպքերուն վերագրածին սպանալիքն իսկ բնոյթն ունի այդ խըն- դիրները մէջտեղ գնելու: Ճակատագրական կը թօփ թէ այդ բնակչութիւնները, որոնց ինչքերը անպատիժ պիտի ձգէին կողոպտել և որոնք չը պիտի զաղբէին ինքզինքներն հնթարկուած տեսնելէ շատ յաճախ ան- պատիժ սպաննութիւններու եւ եղեանագործութիւններու, վերջապէս զգան թէ ամէն բան աւելի աղէկ է քան կօ- տորածի մը մղձաւանջին տակ ապրիլը:

Ասոր համար է որ, վերջին տարիներս, Ֆրանսան,

այնքան ընդհանուր խաղաղութեան հոգովը, որքան մարդասիրութեամբ՝ ջանացած է—եւ Պ. Ռուսներն լաւ գիտէ ատիկա—կոտեցնել չարիքներ, որոնք այնքան աւելի կ'արժէ որ մտահոգ ընեն քաղաքագէտները, որքան որ հանրային խղճմանքը հեղհեղեղ նուազ անտարբեր կը դառնայ անոնց մասին: (Շա'տ շա, շա'տ շա):

Արդէն բոհ հոռ, քանի մը շարաթներ առաջ, գիււնադիտական ճնշումը, զոր քանիցս գործադրեցինք կ. Պօլիս, և ուրիշ արարքներ, որոնց ազգուսթիւնը Հայերը իրենք իսկ ճանչցած ու հռչակած են: Թիւրքիոյ հետ ունեցած մեր վերջին վէճն ալ իրենց օգտակար եղաւ, և Հայերը առաջիններն են—և կը զարմանամ որ Պ. Ռուսներ չը գիտնայ ատիկա— որոնք կը հաւատան, թէ մեր ցոյց առած կորովը կասեցուց գործադրութիւնը այն օպանալիքներուն, որոնք կ'ըսէին անոնք՝ կուտակուած էին, անցեալ ամստոսան ընթացքին, իրենց զլխուն վրայ:

Պ. Ռուսներ.— Խօսք կ'ուզեմ:

Պ. Տէլքասէ.— Թող տուէք ինձ կարդալ ձեզի երկու տող Հայաստանի Հայերէն մէկէն, անոնցմէ՝ որոնք տեղին վրայ են, է՛ն ականաւորներէն մէկը, որուն անունը պիտի լոծմ, չուզելով զայն մատնանիչ ընել զայրոյթի և վրէժնիւրութիւններու:

Ահա՛ թէ ինչ կ'ըսէ այդ Հայը, Ֆրանսոսի արտաքին գործոց նախարարին ուղղելով խօսքը.

« Զարդերուն առաջըը առնուեցաւ, շնորհիւ պետական ներու ազգարարութեանց և զիւանադիտական յարաբերութիւններու խզումին՝ Ֆրանսոսական կառավարութեան կողմէ, որուն կորովի վերջը խիստ բուն արտաբերութիւն մը յատուց բերաւ:

Վտանգը վերջնականապէս հեռացնելու համար՝ Հայերը և իրենց հետ ուրիշ կեղեքուածներ, կայսրութեան ուրիշ մասերուն մէջ, Պետութեանց միջամտութիւնը կը պահանջեն: Անոնք որ պիտի հակէին կարծել, թէ ոչինչ աւելի դիւրին է քան այդ միջամտութիւնը՝ թո՛ղ հաճին յիշել Պեդիլին՝ Վեհաժողովին պատմութիւնը, թո՛ղ մտածեն նաև այն բազմադիմի, փափուկ, ծանրակշիռ հարցերուն, զորո ան ընդունակ է յարուցանելու: Եւ օսկայն Չինաստանի մէջ—որ՝ հակառակ թիւրիմացութեանց և անհամաձայնութեանց այնքան պատճառներու կամ պատրուակներու՝ Պետութիւնները պահեցին իրենց միութիւնը—իրենց գործակցութեան օրինակը թող կուտայ մտածել թէ այդպիսի միջամտութիւն մը իրենց բարեկամեցողութենէն վեր չը պիտի ըլլար: (Շա'տ շա, շա'տ շա):

Արդէն, ինդիւրը՝ Սուլթանին հպատակ այօփնչ կամ այնինչ ցեղին համար անկէ առանձնաշնորհումներ խըլելուն վրայ չէ, այլ կայսրութեան բոլոր բնակչութեանց համար, առանց ցեղի կամ կրօնքի խտրութեան,

անաչառ վարչութիւն մը և անկողմնակալ արդարութիւն մը ձեռք բերելուն մէջ: (Շա'տ շա, շա'տ շա): Ինդիւրը մանաւանդ ձեռք բերելուն մէջ է ապահովութիւնը, որ նուազ հարկաւոր չէ Թիւրքիոյ կեանքին՝ որքան Եւրոպայի խաղաղութեան: (Շա'տ շա, շա'տ շա):

Չեմ ըսեր թէ քիչ կարևոր է ձեւը, որով Պետութիւնները պիտի յարմար գտնէին միջամտել, բայց՝ միասին գիժեն Սուլթանին, թէ նախընտրելի օնոյն գատ գատ խօսիլ անոր, իրենց խօսքը անշուշտ պիտի լսուէր, եթէ՛ այդ խօսքը հասարակաց համոզումի մը եւ հասարակաց բաւական գորաւոր վճռականութեան մը վկայութիւնը տար, վհատեցնելու համար զիրենք բաժնելու ամէն յոյս:

Ատիկա, ըստ իս, այնքան քաղաքագիտական բարձր հեռատեսութեան, որքան մարդկային համբարաշխութեան գործ մը պիտի ըլլար: Եւ ոչ ոք կրնայ տաքակուտիլ այսօր, թէ Ֆրանսան որ արդէն միայնակ ըրաւ բոլոր զիմուսները, զորո կրնար ընել միայնակ, պատրաստ չըլլայ գործնականապէս աշխատակցելու այդ գործին, համոզուած՝ ինզիչքը անկեղծ բարեկամ մը յայտնելու Թիւրքիոյ, անոր յիշեցնելով, թէ կառավարութիւն մը չի քանդէր կամ անպատիժ չի ձգէր քանդել երկար առն իր գոյութեան իսկ իրաւունքները: (Ընդհանուր ծափահարութիւններ):

Նախագահը.— Խօսքը Պ. Ռուսներին է:

Պ. Ռուսներ.— Պարոններ, ինքզինքս շատ գէշ բացատրեցի, ներողութիւն կը խնդրեմ, եթէ արտաքին գործոց նախարարը իմ այս բեմը բերած գիտողութիւններու մէջ կըցաւ տեսնել՝ Ֆրանսոսի կողմէն Թիւրքիոյ դէմ նոր ստիպիչ գործողութիւն մը առաջ բերելու գիտաւորութիւնը: Ես հարցուցի միայն թէ մեր նաւատորմին թրքական ջուրերուն մէջ առագումը, որուն նախաձեռնութիւնը ունեցաւ՝ յանուն կառավարութեան՝ արտաքին գործոց Պ. Նախարարը, արդեօք ոչ մէկ ատիճան ներշնչուած չէ՛ր օուլթանը իր բնաշնչումի ծրագիրներէն հոռ կեցնելու մտածումէն. ես հարցուցի թէ ի՛նչ չափով Պ. Նախարարը՝ պաշտպանն իր անհրաժեշտ հանդերձ իր ազգակիցներուն նիւթական շահերը՝ պաշտպանած էր նաև ինչ որ Պ. Նախարարապետը մեր բարսական աւանդը կոչեց. հարցուցի իրեն ինչ որ ըրած էին այդ բարոյական աւանդին պահպանման համար: Կը ցաւիմ հաստատել թէ արտաքին գործոց Պ. Նախարարին պատասխանը բացարձակապէս ժխտական է:

Թէ մեր նաւատորմին թրքական ջուրերու մէջ ներկայութիւնը կոտորածներու առաջին առած ըլլայ՝ օտոյդ է ատիկա: Թէ Հայերը երախտապարտ ըլլան ձեզի ապոր համար, պարոն նախարար արտաքին գործոց, ա՛տ ալ բոլորովին բնական է: Բայց կը հարցնեմ ձեզի, մտածեցի՞ք խողխոխումի մատնուած այդ զգալի ժողովուրդին ապագային: Ի՛նչ պիտի պատահի վաղը:

Հոկտեմբերի վերջը եւ նոյեմբերի սկիզբն էր որ թրքական ջուրերուն մէջ գացինք. անկից ի վեր ձմեռը եկաւ, ձիւնով պատելով գիւղերը, խափանելով հաղորդակցութիւնները Հայաստանի մէջ, եւ 1901-1902ի ձմեռը, ինչպէս 1893-1894ինը, թրքական նոր սոսկումներ չեղան: Կը կրկնեմ, չի կրնար ըլլալ, որովհետեւ հաղորդակցութիւնները խափանուած են:

Բայց ինչ որ սոսկալի է, այն է թէ՛ վայրկեան մը ֆրանսական նաւատորմին թրքական ջուրերուն մէջ ներկայութենէն սարսափած՝ ուղլթանը անմիջապէս կոտորածները կասեցնելէ վերջ, վազը նորէն շսկսի, քանի որ ոչինչ գտաւ՝ ֆրանսական պահանջումներուն մէջ՝ որ բնայթն ունենար իրեն ցուցնելու թէ պատասխանատու պիտի նկատեն զինքը իր հրամաններուն տակ, իր անձնական զրկումովը զործուած արարքներուն, և Սոլթմանը չիլլայ նորէն ատոր մէջ տեսնայ, ինչպէս տեսաւ 1894-1895ին, քաջալիրութիւն մը շարունակելու համար:

Պ. Ռուանէ զիտել տալով արտաքին գործոց Նախարարին թէ քանի մը լատին ծէսէ եկեղեցիներ միմիայն արծանացած են իր հոգածութեան, կը հարցնէ.

— Բայց անոնք, ուր Հայերը ապաստանեցան եւ որոնք՝ նաւթով ոռոգուած՝ այրեցան, Հայաստանի անհամար եկեղեցիները: Չէ՞ք տեսնար կոր որ ձեր լքումը, խորութիւնը, զոր կը զնէք միւսներուն և ասոնց մէջ, օտոյգ քանդումի մը կը սահմանէ ասոնք, որոնց անտարբեր կը մնաք:

Ահա՛ թէ ինչ է որ զիտ զոյ կը հանէ, պարոններ: Այո՛, Արևելքի մէջ մեր միջամտութիւնը կրնայ կոտորածներ արգելած ըլլալ, բայց այդ արգելումը կարծատեւ պիտի ըլլայ: Անմիջապէս որ գիտցուի թէ անպատճութիւնը ապահովուած է Հայեր ջարդողներուն, թէ Հայերը քրիստոնեաներ են, զորո Յիսուս Քրիստոսի արիւնը չէ փրկած՝ Ապտիլ Համիտի դահիճները՝ այս հաստատումը ընելէ վերջ՝ անոնց վրայ պիտի իյնան: Եւ կարճ ընդմիջումը, զոր յառաջ բերած պիտի ըլլանք, լայնօրէն պիտի փոխարինուի այն կորովովը, զոր դահիճները պիտի զնեն կորսուած ժամանակը դարձանելուն մէջ:

Մէկ խօսքով, կը վախնամ, որ դարնան վերագրածին՝ Հայաստանը 1902ին նոյն վիճակին մէջ գտնուի, ուր կը գտնուէր 1895ին: (Շա՛տ շառ, շա՛տ շառ, ծայրագոյն ճախակողմէն): Միայն օտարաբնութիւնը պիտի ըլլայ, այն է թէ՛ 1896ին, ո՛չ մամուլը, ո՛չ եւրոպական խորհրդարանները ազդարարուած չէին: Այո անգամ, Եւրոպան կանխաւ ազդարարուած է, և եթէ 1896ի ազեռը կրկնուի, Եւրոպան ուղղակի պատասխանատու պիտի ըլլայ ատոր: (Մափաճարոտիւնը ծայրագոյն ճախէն.)

Նախագահը Խորհրդարանին կը հաղորդէ երկու

օրակարգներ: Առաջինը Պ. Պ. Իզնա և Մալաթիանէ՝ «Խորհրդարանը, հաւանելով կառավարութեան յայտարարութիւններուն, կ'անցնի օրակարգին»:

Երկրորդը Պ. Ռուանէն՝ «Խորհրդարանը, յոյս գնելով կառավարութեան վրայ, Եւրոպայի ուշադրութիւնը հրաւիրելու համար սուլթանին առած յանձնառութեանց զրծումին վրայ, կ'անցնի օրակարգին»:

Պ. Տէլքասէ կը յայտարարէ թէ Պ. Պ. Իզնա և Մալաթիայի օրակարգը կ'ընդունի կառավարութիւնը: Պ. Տընիս Քոչէն խօսք կ'ուզէ, ու բժժ կ'ելլէ:

Պ. Տընիս Քոչէն. — Թողտուութիւն կը խնդրեմ բաց մը միայն աւելցնելու Պ. Ռուանէի օրակարգին ի նըպատ:

Բնաւ չեմ տեսնար, թէ ինչո՞ւ գայն չպիտի ընդունէր կառավարութիւնը: Արտաքին գործոց Պ. Նախարարը մեզի խօսեցաւ սարսափելի խնդիրներու վրայ, զորո պիտի կրնար նորէն յարուցանել անդէպ գործողութիւն մը: Կը համարձակիմ զիտել տալ իրեն թէ վտանգները իր կարծածին չափ մեծ չեն թերեւս, թէ կրցաւ ինքն իսկ գնահատել զանոնք, երբ՝ յանուն Ֆրանսայի՝ շատ հաստատ զիրք մը բանեց, որուն համար հեռի եմ զինքը մեզազրելէ:

Այս Արևելքի խնդիրը օպանալիքի մը պէս էր միշտ Եւրոպայի հանգիստին համար. բայց Արևելքի մէջ միջամտութեան մը վտանգները, որոնցմէ կարելի էր վախնալ ատեն մը, կարգ մը պատճառներով, զորո հոս պարզելը երկար պիտի ըլլար, որոնք եւրոպական մեծ պետութիւններու ընդհանուր քաղաքականութեան կը վերաբերին, այո միջոցիս, այդ վտանգները նուազ կը օպանանան, եւ խնդիրները, փանջ Աստուծոյ, անոնցմէ են, որոնց լուծումը Եւրոպան շատոնց ձեռք բերած է: Իրմէ կախուած է միայն այդ լուծումը գործադրել տալը:

Այդ լուծումը կը գտնուի Պեռլինի գաշնագրութեան կէտերուն մէջ իսկ: Դուք չէի՞ք ըսողը քիչ մը առաջ, թէ սուլթանը պարտաւոր էր ատեն ատեն մեծ պետութիւններու հաղորդել իր գործադրել տուած բարեկարգութիւններուն լուրը եւ այն կերպը, որով այդ բարեկարգութիւնները կ'իրականանան: Չեղի համար տուած է երբէք այդ բարեկարգութեանց մասին, զայնս երբէք գործադրած է, տեղը չէ՞ արդեօք իրմէն պահանջել ատիկա աւելի բացորոշ ձեւով մը: (Շա՛տ շառ, շա՛տ շառ, աչ կողմէն):

Վերջապէս, ձեռնէ չենք ուզեր կոր որ այդքան սարսափելի խնդիրներ յարուցանէք, ձեռնէ չենք պահանջեր կոր գիտնալ թէ Թիւրքիան պիտի անդամատուի, թէ խնդիրը անկախ ազգեր ստեղծելուն, ատոնց կամ անոնց երաշխաւորութիւններ տալու վրայ է: (Շա՛տ շառ, շա՛տ շառ): Չէ՛, խնդիրը միմիայն իրականացնելուն

վրայ է գաշնագրութիւն մը, որ կ'ըսէ, թէ՛ Եւրոպայի պատուոյն համար՝ ա՛յլ չպիտի պատահին անկարգութիւններ, արհաւիրքներ, անոնց պէս, որոնց ներկայ եղանք մինչեւ հիմա: Ոչի՛նչ նոր բան կը պահանջենք ձեռնէ, յոյս կը դնենք միայն ձեր վրայ իրականացումին համար՝ շատոնցունէ ծանօթ բանի մը, խիտ շատոնցունէ ի վեր լուծուած խնդրի մը գործադրութիւնը ձեռք բերելու համար: Ոչի՛նչ կայ հոս նոր, ո՛չ ալ վտանգաւոր: Պարտինք ուրեմն վստահիլ ձեր վրայ, պարոն Նարարար, ասոր համար է որ կը թուի ինձ թէ ձեզ առաջարկուած օրակարգը ոչ մէկ կերպով կրնայ վրգավել ձեզի:

Միակ փաստ մը աւելցնելու համար բուռնաբերուն վրայ՝ նամակ մը ունիմ հոս՝ չորս տարիէ ի վեր՝ առանց դատաստանի՝ ահռելի բանտի մը մէջ փակուած չորս Հայերու կողմէ: Կրնաք կարգաւ այդ նամակը, պիտի տեսնաք որ հարկ է գործադրել շատոնց ի վեր շճանչուած գաշնապայմաններ: (Մախաճարոտքիաններ աչ ու զանազան կողմերէ):

Պ. Պ. Իզնար և Մալաթիայի օրակարգը կ'ընդունուի Խորհրդարանի մեծամասնութեան կողմէ:

ԿԱՒԱՂԱՆԻՆ ԱՌՋԵՒ

ՊԵՏՕԻՆ

Դիտեմ, ո՛վ Պետօ, զուցէ չպիտի ներեն քու Հընչակեան բարեկամիդ քեզ լայ, ատելութեան ու կուրացումի այս անասնական օրերուն: Արցունքի կաթիլները պիտի խնայուին քեզի, ու քու եղբրական կախազանիդ առջեւ, քու մեռած հոյակապ հասակիդ, քու բաց մնացած խոշոր աչքերուդ, քու դուրս ինկած լեզուիդ ու քու գալարուած ուտերուդ առջեւ անգամ դեռ չպիտի լռեն պզտիկ, անպիտան կիրքերը: Ու պիտի ըլլան Հայեր, որոնք անպատշաճ պիտի սեպէին կօկիծի ու խանդաղատանքի օրտաբուխ հառաչանք մը թոցնել իրենց շրթներէն, նուիրական դիակիդ հանդէպ:

Փաղափարին՝ զօր մարմնաւորեցիր և օրուն համար չվարանեցար առոյգ ու թանկագին կեանքդ կոտորելու՝ այդ զաղափարին ազմկայոյզ ախոյեաններն իտկ, ո՛վ Պետօ, չպիտի կրնան, քու սուզիդ մէջ, վայրկեանի մը սարսուղան եղբայրութիւնը ապրել:

— Դաշնակցական էր, ինտօ՛ր կուլաս, պիտի ըօնն սմոնք...

— Մեր ապրանքն է, ինչո՞ւ կը շահագործես, պիտի բողոքեն ուրիշներ...

Բայց ես որ ճանչցեր եմ քեզի, ես որ սեղմեր եմ քու ուղղամիտ ու կորովի ձեռուրներդ, ես օրնայիբ եմ քու շիտակ աչքերուդ մէջ, ես չեմ կրնար իմ արցունքոտ հիացումս հաշուել քեզի:

* * *

Իրա՛ւ, ձեռնարկը, որուն մէջ բռնուեցար, չէր կըրնար փոխարինել քու կորուստդ: Սնիկա վար էր քու արժէքէդ, քու կոշումէդ: Բայց ես միմիայն քու անձդ, քու անձնուրացութիւնդ, քու զոհաբերութեան օխրաւի կամաւորութիւնդ ունիմ աչքիս առջեւ: Ու գիտեմ մանաւանդ, թէ դուն համոզուած ու հաւատքով կ'երթայիր, կը նետուէր միշտ:

Դուն կանգ առնել, հանդարտիլ չէիր դիտեր, ու քու յեղափոխական ամենէի կորովիդ վատնում մը պէտք էր միշտ, ո՛ր և ի՛նչպէս ալ ըլլար: Բու կուրծքդ պէտք էր ծառանար, պէտք էր դուրս ցցուէր վտանգին առջեւ, ապա թէ ոչ՝ դուն չէիր կրնար հանգիստ շունչ առնել:

Ու ե՞թէ երկվայրկեան մը կըցաւ խռովիլ հոգիդ, կախաղանին առջեւ, որուն շուանը տիրաբար բռնեցիր, և թէ կտոր մը կօկիծ ունեցար քու ճահիլ արեւուդ մթննաշուն՝ ատիկա, ապահո՛ւք եմ, ո՛վ Պետօ, սարջանքի կամ տկարութեան վախճանական մղում մը չէր քու ներօխիդ: Դուն դառնացար անշուշտ չկրնալուդ համար զօհուիլ գերագոյն ու արգաւանդ կոխիւն մէջ, չկրնալուդ համար Ազատութեան արիւնոտ արշալոյսին առջեւ ինչպէ կուրծքէդ զարնուած, չկրնալուդ համար հայրենի հողին փշել քու մեծ տնդօրրած հոգիդ:

* * *

Բայց Ոճիրի փոսին մէջ, ուր խելագար Բանութիւնը նետեց քու հսկայ մարմինդ, թո՛ղ քու սօկօրներդ հանգիստ ընեն: Մենք պիտի յիշենք ու սիրենք քեզի նօրէն ու միշտ, ու քու անմխիթարելի կորուստդ ընդունայն եղած չպիտի ըլլայ, եթէ կախաղանդ՝ անսրօք մղձաւանջի մը պէս՝ ցցուի Հայ Երիտասարդութեան պարպուած հոգիին առջեւ, անոր վայրագ և խորհացող հանգիստի գիշերներուն յաճախանքն ըլլայ և անոր եղեռնական եռամուրթիւնը թունդ հանէ, կըծող խղճի-խայթի մը պէս:

Երանի՛, անձնուրացութեան ու հաւատքի նոր ու շքեղ Դաօ մը ըլլար կախաղանդ: Այն ատեն քեզ ճանչցողներուն սիրաբնուազ պիտի այրէր քու աղետաբար մտածումէդ՝ ո՛վ իմ աղւոր, ո՛վ իմ կտրիճ Պետօ...

ԼՈՒՐԵՐ

ՊՕՄԵՍԻ ԳՈՂԹՈՒՆՆԵՐ. — Հոսկարական կես պաշտօնական Մաձաս Եկեղեցի բերքը, մեկ քանի Պօսնացի ակաճառներնու կողմէ իրեն հաղորդուած գրութիւն մը կը հրատարակէ, ուր նկարագրուած է խղճալի վիճակը շատ մը պօսնացիներու, որոնք՝ փայլուն խոստումներով հրապօրուած՝ բողոք են իրենց տուն տեղը և Թիւրքիա գաղթած: Այդ գրութիւնը կը հաստատէ, թէ այս մարդիկը ամենածանր բռնաճարտան մէջ կը գտնուին: Անոնք զրուած են ուտիլականակաճ հսկողութեան տակ, անոնցմէ ոմանք եոյն իսկ զրկուած են փոքր Ասիա, ուր՝ ամեն քուճէ գրկուած վիճակի մը մէջ՝ կը բախտահին Պրոտասի և Էնկիարիի շրջակաները: Թիւրքիա բնակող պօսնացի միտաչմանները, հրապարակած են յայտարարութիւն մը, զգուշացնելով իրենց հայրենակիցները ուրիշ տեղ չի գաղթել: Ասկէ գատ, շատ մը վայրերէ, Էնկիարիի եւ Պրոտասի պօսնացի պէյերէն, աղերսագրեր ուղղուած են սուրբանին, խնդրելով որ թիւրք կառավարութիւնը միջոցներ ձեռք առնէ գաղթականութեան այս հոսանքին առաջըն առնելու: Թրաքիքէն ալ երկու պէյեր Կ. Պօլիս մեկնած են վերջերս, գաղթականութիւնը կասեցնելու մասին լոյնխմաւտ յայտարարութիւններ քննելու սուրբանին, և միևնոյն ատեն խնդրելու անկէ հրաւանացիք մը զիարացնելու համար պօսնացիներու վերագարձը դէպի իրենց հայրենիքը:

ՄԻՍ ՍԹՕՆԻ ազատութիւնը ձեռք բերելու համար եղած վերջին փորձը այս անգամ ալ ի դերու է շատ, թէ՛ գուճարը, որ կը պահանջուէր իրեն իր փրկանքին զինք, միևնոյն Ռասպոք զրկուած էր: Թիւրքերը խոստացած էին զինուորներ ղենլ աներիկեան բարգմանին տրամադրութեան տակ, զրամին եւ մարտոցը պաշտպանութեան համար: Հակառակ սակայն աներիկեան ղենպանի փոխաքին, անոնք կը պնդէին գոնէ յիսուն հոգի զրկել միևնոյն Ռասպոք: Ուր տեղական կառավարիչը իմացուց իրենց թէ հրաման խտացած էր աչքը չի հետացնել ոչ զրամը եւ ոչ մարդերը, ու բայ չի տուլ որ փրկանքի գուճարը, բրքական հողի վրայ վճարուի:

Բանակցութիւնները միևնոյն ատեն կը շարունակուէին Իրան հետ: Ետո բնական է որ առաջակները չը պիտի փորձեն աներիկեան բարգմանը կը բերայ տես-

նել թիւրք զինուորներու ներկայութեանը: Հակառակ այս ամենուն, լուր առնուած է թէ պոզիկարական սահմանագիտին վրայ թիւրք զինուորներու թիւը շատ աւելցած է: Միշտ կողմէ, տեղեղն քայլարարը յայտարարած է, թէ իր կառավարութեանը պատասխանատու կը մնայ երկ երբէք բոլր ապ որ զրամը բրքական հողի վրայ վճարուի: Գործը այս անյաջողութեան չի բանգեր անշուշտ երկ կանխաւ ամեն բան կարգադրուած ըլլար Իրան հետ, և գերիներուն վիճակը բնականաբար չի վատրուանար:

ԱԶԴ

ՀԱՆՏԱՆՈՐ

Կարելոր է ստիպողական կարգադրութիւններու, ինչպէ՛ս նաև անյապաղ ճշգրտելիք խնդիրներու պատճառով, «Նոր-Կեանք»-ի Ծրդ տարեշրջանը ստիպուած ենք քիչ մը ուշ սկսիլ, նոյն ուղղութեամբ եւ կատարեալ կանոնաւորութեամբ:

ՀԱՍՑԷ

«ՆՈՐ ԿԵԱՆՔ»-ի վերաբերեալ նամակ ու բաժնեգին զրկել Հետեեալ Հասցէին.

REDACTION DU "NOR-GUIANK"

27, BATHURST GARDENS,

KENSAL RISE,

(ENGLAND.)

LONDON, N. W.

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ կը հրատարակուի ամէն ամսու 1 ին եւ 15 ին: Բաժնեգինն է Եւրոպայի Համար տարեկան 10 եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի Համար տարեկան 2 ու վեցամսեայ 1 սոլար: